

# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2013 Թ.

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

#### **Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ**

- ՀՀ կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներով, մրցունակ կրթական և գիտական համակարգի իրավական հիմք ապահովելու նպատակով երաշխավորված նվազագույն 9-ամյա կրթությունից անցում է կատարվելու անվճար 12-ամյա կրթությանը: Համապատասխան փոփոխությունների նախագծերն ուղարկվել են ՀՀ կառավարություն՝ հաստատման:
- 2012-2013 ուսումնական տարում հանրապետության գյուղական հիմնական փոքր, քաղաքային միջնակարգ մեծ և ավագ դպրոցներում իրականացվել է փորձնական վարկանիշավորում: Նշված դպրոցները Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն են ներկայացրել համապատասխան տեղեկատվություն, որի հիման վրա կենտրոնում կատարվել են տվյալների մուտքագրման և մշակման աշխատանքներ:
- 2011-2012 ուսումնական տարվանից հանրապետության դպրոցների 2-րդ դասարանից սկսած, ուսումնական պլանով ներդրվեց «Շախմատ» առարկան, որի դասավանդումն ավարտվում է 4-րդ դասարանում: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տպագրվել և հանրապետության բոլոր դպրոցներին են տրվել Հայաստանի Շախմատի ակադեմիայի հրատարակած «Շախմատ» առարկայի 4-րդ դասարանի դասագիրքն ու խնդրագիրքը: Այսպիսով, 2012-2013 ուսումնական տարում ամփոփվել է 2-4-րդ դասարանների «Շախմատ» առարկայի դասագրքերի և խնդրագրքերի հրատարակումը: Ըստ կարգի՝ դրանք կվերահրատարակվեն 3 տարի հետո:
- 2013 թվականի հունվարից հանրապետության բոլոր 1441 դպրոցներն ընդգրկվել են Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցում:
- Նոր՝ բեռնաթափված, ուսումնական ծրագրերով հանրապետության 96 դպրոցներում իրականացվել է հիմնական դպրոցի 20 անուն դասագրքերի փորձարարկում, որից հետո դրանք լրամշակվել են, հրատարակվել և առաքվել են դպրոցներ:

- Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկն ընդլայնվել է 18 դպրոցով: Ներկայումս հանրապետությունում գործում է ներառական կրթություն իրականացնող 117 հանրակրթական դպրոց:

**«Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագրից» ելնելով՝ հաստատվել են մի շարք իրավական ակտեր, որոնք կարգավորում են համակարգը.**

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ» (ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013 թվականի հուլիսի 30-ի N 1001-Ն հրաման):

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները և որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ» (ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրաման):

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

***ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել են.***

«Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, հաստատությունից տեղափոխման և ազատման» կարգը:

«Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների կարգերը:

***Հաստատման է ներկայացվել.***

«Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների» կարգը:

***Լրամշակվել և կառավարություն են ներկայացվել.***

«Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բարեփոխման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

«Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

***Շահագրգիռ գերադասություններ՝ կարծիքի է ներկայացվել.***

«Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված հանրակրթական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության նախագիծը:

**Մասնակցություն միջազգային կոնվենցիաների պահանջներից բխող զեկույցների մշակմանը.**

«Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» զեկույց:

«Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի»

զեկույց:

«Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի»

3-րդ զեկույց:

**Համագործակցություն այլ գերադասությունների հետ.**

«Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ, սանիտարական կանոններ և նորմեր» գերատեսչական ակտի նախագիծ:

«ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր»

ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի N 82 հրամանով հաստատված՝ «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N 2.III.4.2...սանիտարական կանոնների վերանայում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ

«Հանրակրթության բնագավառում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների

տրամադրման մոդելի» մշակման աշխատանքներին մասնակցություն:

«Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթական և այլ կարիքների գնահատման, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին մասնակցություն:

ՀՀ ոստիկանության հետ համատեղ Երևանի ավագ դպրոցներում «Ոստիկանը դպրոցում» ծրագրի իրականացում:

«Կրթության բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին» համատեղ հրաման՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ:

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների արեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացի կազմակերպում.**

Կազմվել է ընթացիկ տարում Հայաստանում ատեստավորման ենթակա ուսուցիչների տվյալների բազա՝ ըստ դասավանդվող առարկաների ՀՀ ԿԳՆ ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատություններից ներկայացված տվյալների:

Ընդհանուր առմամբ՝ տարակարգեր են շնորհվել հանրապետության 194 ուսուցիչների:

**Պետական բյուջեով տպագրվող դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հայտերի պատրաստում.**

Պետական բյուջեով տպագրվել և բաշխվել են հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում գործածության երաշխավորված այլընտրանքային դասագրքերը:

ՀՀ ԿԳ նախարարի 27.08.2013թ. N 1046-Ա/Ք հրամանով հաստատվել է 2013–2014 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը: Ձևավորվել են նաև հանրակրթական դպրոցին անհրաժեշտ ուսումնամեթոդական ձեռնարկների հայտերը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանն են ներկայացվել տարբեր հրատարակչություններից, անհատ հեղինակների կողմից մշակված ուսումնական նյութեր:

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների փնտրենների վերապատրաստում /հավաստագրում/ իրականացնող կազմակերպությունների մրցույթի անցկացում.**

Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար դիմող անձանց վերապատրաստումն իրականացնելու նպատակով 2013 թվականին հայտարարվել է վերապատրաստող կազմակերպությունների ընտրության 2 մրցույթ:

Մրցույթն անցկացվել է կրթության և գիտության նախարարի՝ 18.05.2010թ. N 393-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգի» պահանջներին համապատասխան: Մրցույթին մասնակցել են 5-7 կազմակերպություններ, որոնց, մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո, իրավունք է տրվել իրականացնել վերապատրաստումներ: Դրանք են՝ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, «Կրթություն առանց սահմանի» ՀԿ-ն, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա հասարակական կազմակերպությունը, Խ.Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանը, «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը»:

**Նախադպրոցական կրթություն.**

*Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում.*

ՀՀ մարզերում նախադպրոցական հաստատություններ չունեցող և թերկոմպլեկտավորված մանկապարտեզներ ունեցող համայնքներում նախադպրոցական կրթության ծառայությունների կազմակերպում:

Նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածության մեծացում 1107 երեխայով:

ՀՀ 10 մարզերի 73 հաստատությունների նախակրթարանների հիմնման աշխատանքները: Հաստատությունների մեծ մասն ավարտել են նախակրթարաններին հատկացված տարածքների բարեկարգման աշխատանքները: Ներկայումս ընթանում են գրենական պիտույքների, խաղալիքների, խաղերի ձեռք բերման և կահավորման

աշխատանքներ: Շատ հաստատություններ սկսել են գործել: Նոր ստեղծվող նախակրթարաններում նախատեսվում է ընդգրկել շուրջ 1800 երեխա:

«Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրագրերի, ուսումնամեթոդական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաներ» ծրագրի շրջանակում մշակվել և հրատարակվել է «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում» ուսումնամեթոդական ձեռնարկը:

### **Դպրոցականների առարկայական հանրապետական և միջազգային օլիմպիադաներ.**

Հայաստանի Հանրապետությունում դպրոցականների առարկայական օլիմպիադաներն անցկացվում են հանրակրթական 16 առարկաներից /»Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն», «Հայոց լեզու, հայ գրականություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Պատմություն», «Աշխարհագրություն», «Հայոց եկեղեցու պատմություն», ՆԶՊ/:

Հայաստանի դպրոցականները 2013 թվականին մասնակցել են «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ինֆորմատիկա» առարկաներից կազմակերպված միջազգային օլիմպիադաներին: 2013 թվականին հայ դպրոցականները մասնակցել են առարկայական միջազգային 5 օլիմպիադաների, որտեղից վերադարձել են 11 մեդալներով՝ 1 արծաթե և 10 բրոնզե:

### **ԱՊՀ երկրների հետ հանրակրթության ասպարեզում համագործակցության ծրագրի իրականացում.**

ԱՊՀ և Բալթյան երեկրների մանկավարժների և ուսաց լեզվի ուսուցիչների համար կազմակերպվել և անցկացվել է «Русский язык в формате 3D: лингвистика, образование, культура» միջազգային գիտագործնական կոնֆերանս, ինչպես նաև կյոր սեղան՝ «Русский язык как цивилизационная основа создания и развития Евразийского союза», ինչպես նաև ուսաց լեզվի ժամանակակից մեթոդների դասսավանդման վերապատրաստումներ՝ «Школа педагогического мастерства» և տարբեր մրցույթներ:

### **Ուսումնական հաստատություններում օտար լեզուների ուսուցման գործընթացի ապահովում.**

Հայաստանի և OIF-ի միջև ստորագրված լեզվական ծրագրի շրջանակում «Հանրակրթական դպրոցներում ֆրանսերեն դասավանդող ուսուցիչների մասնագիտական կարողություններին և հմտություններին վերաբերող և ֆրանսերենի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու հետ կապված հիմնարար հարցերը» թեմայով սեմինարի կազմակերպչական աշխատանքներին մասնակցություն:

- «Հայկական Ալիանս Ֆրանսեզ» կրթամշակութային կազմակերպության հետ համատեղ ֆրանսերեն դասավանդողների ամենամյա սեմինարների կազմակերպում և մասնակցություն:

### **Հանրապետական նշանակության մրցույթների կազմակերպում.**

- «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» ամենամյա մրցույթի հանրապետական փուլին այս տարի մասնակցել է 38 մանկավարժ՝ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից: Մրցույթի ամփոփումից հետո հանձնաժողովները որոշել են «Տարվա լավագույն ուսուցչին», «Տարվա լավագույն տնօրենին» և «Տարվա լավագույն դաստիարակին»: Տարվա լավագույն ուսուցչին և դաստիարակին ՀՀ վարչապետը պարգևատրել է ավտոմեքենաներով: Մրցույթի մասնակից մյուս ուսուցիչները խրախուսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից:

- «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», բնագիտական /»Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»/ առարկաների ուսուցիչների և դասավարդների ամենամյա մրցույթի մարզային փուլին մասնակցել են շուրջ 180 ուսուցիչ, իսկ հանրապետական փուլին՝ 46 ուսուցիչ:

Այս տարի առաջին անգամ կազմակերպվել և անցկացվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթը:

### **Հանրապետական նշանակության մրցույթների կազմակերպում.**

11-րդ անգամ անցկացվել է դպրոցականների ամենամյա ասունքի հանրապետական փառատոն, որին մասնակցել են հանրապետության բոլոր մարզերի 9-12-րդ դասարանների դպրոցականներ:

Տարվա ընթացքում անցկացվել են շարադրությունների մրցույթներ՝ նվիրված Ղարաբաղյան շարժման 25-ամյակին, Երևանին: Ռուսաստանի հայերի միության հետ համագործակցության շրջանակներում՝ «Մենք եղել ենք, կանք, կլինենք» խորագրով անցկացվել է շարադրությունների մրցույթ:

**Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ.**

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, ՀՀ արտաքին գործերի նախարարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակ, Համաշխարհային Բանկի Երևանյան գրասենյակ, «Փրկեք երեխաներին» կազմակերպություն, «Հայկական Ալիանս Ֆրանսեզ» կրթամշակութային կազմակերպություն, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատուն, Ֆրանսիայի դեսպանատուն, Ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիա, «Հայաստանի պատանեկան նվաճումներ», «Երիտասարդական նվաճումներ», «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան գրասենյակ, GIZ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) առանձին երկրների ծրագրերի համատեքստում նախնական միջնաժամկետ զեկույցի՝ Հայաստանին վերաբերող տեղեկատվություն՝ նախադպրոցական և հանրակրթության հատվածով:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի գրասենյակի հետ համագործակցության շրջանակում՝ «Մարդու իրավունքների և ժողովրդավարության կրթության մասով հանրակրթության համակարգում վերափոխումներ կատարելու գործողությունների հիմնական ուղղությունները» (2013-2017թթ.) գործողությունների պլանի մշակման աշխատանքներին մասնակցություն:

Ռուսաստանի կրթության ակադեմիային առընթեր Կրթության կառավարման ինստիտուտի կազմակերպած՝ «Կրթության ոլորտի տարբեր մակարդակներում ուսումնական առաջընթացի գնահատման արդյունքների արդիական հարցեր» խորագրով գիտաժողովին մասնակցություն:

Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ Հայաստանում գնահատման նոր գործիքների կիրառմանը նվիրված աշխատաժողովին մասնակցություն:

**ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**



Հայաստանի Հանրապետությունում 2013թ. նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 56 պետական ուսումնական հաստատությունում (25 ՆՄՈՒՀ, 24 ՄՄՈՒՀ, 4 կրթահամալիր, 1 ԲՈՒՀ, 1 հիմնադրամ): 56 պետական ուսումնական հաստատությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրերով սովորում է 6853 ուսանող (որոնցից 6312-ը՝ անվճար հիմունքով) և աշխատում է շուրջ 950 դասախոս և արտադրական ուսուցման վարպետ:

2013 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 81 պետական ուսումնական հաստատությունում: Հանրապետությունում գործում է միջին մասնագիտական պետական ուսումնական 72 հաստատություն, որից 68-ը՝ ՀՀ ԿԳ նախարարության համակարգում: 81 պետական ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորում է 27452 ուսանող (որոնցից՝ 9513-ն անվճար հիմունքով) և աշխատում է 3507 դասախոս:

2013թ. իրականացրած բարեփոխումների շրջանակում ՄԿՈՒ ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Մշակվել են եվրոպական չափանիշներին համապատասխան նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 17 պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր: Մշակված չափորոշիչները ստացել են դրական փորձագիտական եզրակացություն ոլորտային հանձնաժողովների կողմից, հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով և 2014-2015 ուսումնական տարվանից կներդրվեն ուսումնական հաստատություններում:

2013 թվականի ընթացքում վերապատրաստվել են շուրջ 1000 ուսումնական հաստատությունների դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ, 60 տնօրեններ և տնօրենի տեղակալներ, չափորոշիչներ մշակող փորձագետներ, ՄԿՈՒ համակարգի աշխատակիցներ, ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամներ:

ՄԿՈՒ համակարգի համար մշակվել և հաստատվել են 12 անուն ուսումնական ձեռնարկներ և ուսումնամեթոդական նյութեր, որոնք այժմ ներկայացված են տպագրության:

2012-2013 ուսումնական տարվանից ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքով, բացառությամբ՝ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի մասնագիտությունների:

2012-2013 ուսումնական տարվանից 50% ավելացել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը: Իսկ 2014թ.-ից հիմնական կրթության հիմքով ընդունվողների համար կրթությունը կիրականացվի անվճար հիմունքով:

ՄԱԶԾ ծրագրով մի քանի ուսումնական հաստատությունների տրամադրվել է նյութատեխնիկական բազա, մասնավորապես, ուսումնական արհեստանոցներ և ջերմոցներ, իրականացվել են վերապատրաստման դասընթացներ /դասախոսների, տնօրենների, ՄԿՈՒ քաղաքականություն մշակողների համար/, մշակվել, թարգմանվել և տպագրվել են ուսումնական ձեռնարկներ և ուղեցույցներ: 2013թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության և Հայ ոսկերիչների համաշխարհային ասոցիացիայի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որն իր հերթին կարևորում է մասնագիտական կրթության և ուսուցման շարունակական զարգացումը, ուսումնական հաստատություն-գործատու գործընկերային կապերի ամրապնդումը, հաստատությունների շրջանավարտների զբաղվածության ապահովումը, մասնավորապես, ոսկերչության բնագավառում:

Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ) հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ 12 տարածաշրջանային քոլեջներում կարիերայի կենտրոնների ներդրման և գործարկման ուղղությամբ, կազմակերպվել է կենտրոնների պատասխանատուների վերապատրաստման ծրագիր: Մշակվել է «Մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների զարգացման» ուղեցույց ձեռնարկը, որով և նախատեսվում է պլանավորել և իրականացնել կարիերայի ուղղորդման աշխատանքները քոլեջներում:

Ավարտվել են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) մշակման, նախնական (արհեստագործական) և միջին

մասնագիտական ուսումնական հաստատություններում ՄԿԿՏՀ-ի տեղային տարբերակի տեղադրման և այդ հաստատությունների համապատասխան մասնագետների վերապատրաստման աշխատանքները: Մշակման փուլում է ՄԿԿՏՀ տվյալների մուտքագրման և հաշվետվությունների փոխանցման կարգը:

Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ Հայաստանն առաջին անգամ մասնակցել է «Համաշխարհային հմտություններ» 42-րդ միջազգային մրցույթին, որը տեղի է ունեցել 2013 թվականի հուլիսի 2-7-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաքում: Հայաստանի ազգային թիմը մասնակցել է 3 հմտություններով՝ ոսկերչություն, խոհարարություն և նորաձևության տեխնոլոգիա:

Սույն թվականի նոյեմբերի 22-23-ը կայացել է «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթը 3 մասնագիտությունների գծով՝ ոսկերչություն, նորաձևություն, խոհարարություն: Մրցույթին հաղթող ճանաչված ուսանողները կմասնակցեն 2015թ. Սան-Պաուլոյում կայանալիք «Համաշխարհային հմտություններ» միջազգային մրցույթին: Մշակվել են մի շարք իրավական ակտեր, առաջարկվել է օրենսդրական փոփոխության նախագիծ, որով նախատեսվում է բարձրացնել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման որակն ու արդյունավետությունը, ներդնել տնօրենների պարտադիր վերապատրաստման և հավաստագրման համակարգ:

## **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

1. 2013 թվականին մեկնարկել է «Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին» գործընթացը: Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով սահմանվել է միջին որակական գնահատականի շեմ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով 75 %, այս պարագայում՝ 417 ուսանողի: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվում է առաջին անգամ, ուստի նախարարի հաջորդ հրամանով միջին որակական գնահատականների շեմերը նվազեցվել են՝ սահմանվելով՝ բակալավրի կրթական ծրագրով՝ 40%, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 50%: Արդյունքում՝

հնարավորություն է ընձեռվել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնել 845 ուսանողի համար:

2. «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքներում առաջարկվել է փոփոխություններ և լրացումներ, համաձայն որի՝ հնարավորություն է ընձեռվում բուհերի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցում իրականացնել և ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին և ստեղծել հավասար ֆինանսական աջակցության պայմաններ՝ միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար: Նշենք նաև, որ սահմանվել է ուսման վարձի առավելագույն շեմ՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտությունների և հավատարմագրման արդյունքների, ինչպես նաև կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված հատուկ սոցիալական ծրագրերի:

3. Մշակվել են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունը, ցուցանիշները, հաշվարկի մեխանիզմները և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից լրացվել են փորձնական վարկանիշավորման համար անհրաժեշտ տվյալների ցանկերը: Ներկայումս իրականացվում է բուհերի կողմից լրացված տվյալների մոնիթորինգ: Նախատեսվում է մինչև ս.թ. դեկտեմբերի ավարտն իրականացնել բուհերի փորձնական վարկանիշավորում:

4. Ս.թ. հոկտեմբերի 17-18-ին Երևանում տեղի է ունեցել «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի իրագործում» կրթության նախարարների տարածաշրջանային հանդիպում, որին մասնակցել են շուրջ 10 օտարերկրյա պետությունների և Եվրոպայի Խորհրդի ներկայացուցիչներ, ինչպես նաև Բուհերի Եվրոպական ասոցիացիայի և Եվրոպայի ուսանողական միության նախագահները: Որակավորումների ազգային շրջանակների տարածաշրջանային ցանցի պատասխանատուների առաջին հանդիպման արդյունքում ընդունվել է հռչակագիր:

5. Ավարտվել է Եվրոպական Միության TEMPUS 6 ծրագրերի մրցույթի վերջնական փուլը: Հայաստանի Հանրապետության ներկայացրած 28 ծրագրերի հայտերից ընտրվել և հաստատվել են 18-ը, որից 9-ում ներգրավված գործընկեր է հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, իսկ 6 ծրագրերի կորդինատորները՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունները:

6. Բոլոնիայի գործընթացի շրջանակում բուհերի ինքնավարության մեծացման նպատակով նախատեսվում է «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը վերակազմակերպել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի:

7. Մասնագիտական կրթության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման, բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության պլանավորման, կառավարման և գնահատման, ինչպես նաև արդյունքների վերլուծության, մոնիտորինգի ու գնահատման կարողությունների բարձրացման, կառավարման բոլոր օղակներում հավաստի տեղեկատվության վրա հենված որոշումներ կայացնելու նպատակով «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվել են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ-ի) մշակման, տեղադրման, ինչպես նաև այդ հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստման աշխատանքներ: ՄԿԿՏՀ-ի հիմնական գործառույթներն են՝ կրթական հաստատություններից տվյալների հավաքագրում, հավաքագրված տվյալների պատշաճ պահպանում, հավաքագրված տվյալների որակի ապահովում, այդ թվում՝ տվյալների հավաստիության, կայունության, փոխհամադրելիության, շարունակաբար թարմացման և այլ ուղղություններով, հավաքագրված տվյալների հիման վրա կրթական տարբեր մակարդակների համար անհրաժեշտ հաշվետվությունների ստացում, կրթական հաստատությունների առօրյա գործառնության համար անհրաժեշտ տվյալների մուտքագրում, օգտագործում և այդ տվյալների հիման վրա անհրաժեշտ տեղեկությունների ավտոմատ փոխանցում կենտրոնական կառույցին:

## **ՄԱՐԶԱՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Սովորողներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և ուսումը հանրակրթական ուսումնական հաստատություններում շարունակելու համար նախապատրաստվել են ՀՀ կառավարության որոշումներ: Համաձայն «Զենքի մասին»

«Օրենքի՝ «Կառավարությանն առընթեր Ոստիկանության հետ համատեղ շարունակվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական ինքնաձիգի և ուսումնական փամփուշտների տրամադրումը /շուրջ 1150 հանրակրթական ուսումնական հաստատություններում պատրաստվել են զենքի պահպանման սենյակներ, որոնք հագեցվել են անհրաժեշտ ուսումնական ավտոմատներով, նոնականետերով, ականներով, նոնակներով և զինամթերքով/:

Սահմանամերձ հանրակրթական ուսումնական հաստատությունների, մասնավորապես, Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարելավելու և դպրոց-ուղեկալ կապերն ամրապնդելու նպատակով «Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության հետ 2013 թ. շարունակվել է դպրոց-ուղեկալ համատեղ աշխատանքների իրականացման միջոցառումների ծրագիրը /18.04.20102թ. N 303-Ա/Բ, 02.05.2012թ N 40-Ա/:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների Նախնական զինվորական պատրաստության աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով «500 ուսումնական հաստատություններին հատկացվել են 500 օդամղիչ հրացաններ (համաձայն «Կրթության և գիտության նախարարության և «Հայոց Արծիվներ» հասարակական կազմակերպության համատեղ մշակված ծրագրի):

2013թ մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ը «Ողջ տարածքում իրականացվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարանի 22000 սովորողների 16-ժամյա ռազմադաշտային պարապմունքներ, որոնք անցկացվել են պարտադիր ուսումնական հրաձգության իրականացմամբ:

Զինվորական ղեկավարների հետ տարածքային զինկոմիսարիատներում, ս.թ. օգոստոսի 22-24-ն անցկացվել են եռօրյա ուսումնամեթոդական պարապմունքներ, որոնց ընթացքում «ՊՆ, «ԱԻ, «Ոստիկանության, «ԿԳՆ և հանրապետական զինկոմիսարիատի ներկայացուցիչների կողմից իրականացվել են հրահանգավորման աշխատանքներ:

Ամբողջովին լրամշակվել և «արդարադատության նախարարությունում պետական գրանցման է ներկայացվել ««Ավագ, միջնակարգ, հիմնական հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կարգը՝ համապատասխանեցնելով «Հանրակրթության մասին», «Զինապարտության մասին», «Արտակարգ իրավիճակների մասին», «Զենքի մասին» «Օրենքների դրույթների հետ:

ՀՀ ՊՆ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ համատեղ ուժերով նախաձեռնվել է «Նախագորակոչային տարիքի երեխաների շրջանակներում ռազմահայրենասիրական, սոցիալական և ընդհանուր իրավական իրազեկության վերաբերյալ» ծրագիրը:

Շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ քննարկվել և սահմանվել է «Աղետներին՝ երկրաշարժի դիմակայացման ուղղված ուսուցման կազմակերպումը դպրոցներում» նախատեսվող միջոցառումների տեսլականը, որը հետագա առավել փորձագիտական քննարկման և հստակեցման կարիք ունի:

ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության համատեղ քննարկումներով սահմանվել և հաստատման է ներկայացվել «Սահմանապահի պատանի ընկեր» ռազմամարզական խաղը, որը սահմանամերձ տարածքների պահպանման համար ունի նաև ռազմավարական նշանակություն:

ՀՀ պաշտպանության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության հետ մշակվել և սահմանվել է «Տարվա լավագույն զինվորական ղեկավար», «Տարվա լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթների կարգը, որը 5 նախարարությունների համատեղ հրամանով հաստատվել է: Արդեն իրականացվել է խաղի վերջնական արդյունքների ամփոփումը: Հաղթող մասնակից ուսումնական հաստատությունները կներկայացվեն շահագրգիռ նախարարությունների պարգևատրմանը:

ՀՀ պաշտպանության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ մշակույթի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության հետ պատրաստվել է համատեղ հրաման՝ ՀՀ պետական խորհրդանիշների հանրահռչակման, հայրենասիրական և հոգևոր դաստիարակության, նախնական զինվորական պատրաստության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, քաղաքացիական պաշտպանության հիմնախնդիրների լուծման վերաբերյալ, ինչպես նաև դրա բարելավմանը նպատակուղղված համատեղ միջոցառումների պլան ստեղծելու և իրագործելու նպատակով ստեղծվել է

աշխատանքային խումբ: Արդեն մշակվել է այդ բնագավառում 2013-2015թթ. համատեղ աշխատանքների իրականացման միջոցառումների ծրագիր, որը ներկայացվել է շահագրգիռ նախարարությունների քննարկմանը:

Համաձայն «Կորյուն» ռազմամարզական խաղի կանոնակարգի՝ ՀՀ բոլոր մարզերում մինչև ապրիլի 15-ն անցկացվել է խաղի մարզային փուլը՝ ՀՀ հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 1-3 կուրսերում, որը հանդիսանում է ռազմահայրենասիրական ամենամյա աշխատանքների բաղկացուցիչ մաս:

ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ մշակույթի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր Ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության համատեղ կազմակերպվելիք «Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով գիտագործնական կոնֆերանսի անցկացում ս.թ. դեկտեմբեր ամսին:

2013 թվականին մշակվել և իրականացվել են ՀՀ կառավարության հորեյլանական միջոցառումների ծրագրերից բխող նկարչական, գեղարվեստական, մարզական, տեխնիկական և այլ ծրագրեր:

2013 թվականին կատարելագործվել է արտադպրոցական ոլորտի նորմատիվ-իրավական դաշտը. մշակվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի հուլիսի 23-ի թիվ 984-Ն հրամանով հաստատված ՀՀ երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները, լրամշակվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1496-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի և ատեստավորման ընթացակարգերը հաստատելու մասին» N 1120-Ն հրամանը:

2013 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 46 արձանագրային որոշմամբ հաստատված



«Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների» պետական ծրագրից բխող միջոցառումները:

2013 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Գեղագիտության ազգային կենտրոնի հետ համատեղ արդեն չորրորդ անգամ նախաձեռնել և իրականացրել է «Հայոց լեռնաշխարհից ծնված ոգին» համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը: Մրցույթ-փառատոնին ներկայացվել են 6-18 տարեկան երեխաների շուրջ 2000-ից ավելի նկարներ՝ Սփյուռքի 14 երկրից (ԱՄՆ, Արգենտինա, Իրան, Լիբանան, Մեծ Բրիտանիա, Ղազախստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Ուրուգվայ, Ռուսաստան, Սիրիա, Քուվեյթ, Վրաստան), Հայաստանից և Արցախից:

2013 թվականին մարզադպրոցների 12 մարզիկներ մասնակցել են հրաձգության և նետաձգության միջազգային մրցումների՝ գրավելով պատվավոր տեղեր: Դանիայում կայացած Եվրոպայի առաջնության օդամղիչ զենքերից հրաձգության միջազգային մրցումներին 3 մարզիկներից մեկն արժանացել է բրոնզե մեդալի:

«Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ ներկայացուցիչներից կազմված Հայաստանի ընտրանին, մասնակցելով Վրաստանի Թբիլիսի քաղաքում կայացած ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը, գրավել է պատվավոր 1-ին և 2-րդ տեղերը: Ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոնատին Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում կազմակերպության ներկայացուցիչը գրավել է պատվավոր առաջին տեղը: Ռուսաստանի Կազան քաղաքում կայացած ազատ ոճի ըմբշամարտի համաշխարհային ուսանողական խաղերին՝ պատվավոր 2-րդ տեղ, Ուկրաինայի Կիև քաղաքում կայացած բռնցքամարտի աշխարհի պատանիների առաջնությանը՝ պատվավոր 3-րդ տեղ, բռնցքամարտի Եվրոպայի կրտսեր պատանիների առաջնությանը՝ պատվավոր 3-րդ տեղ (Իռլանդիա, Դուբլին), հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությանը՝ 9-րդ տեղ (Բուլղարիա, Սոֆիա):

2013 թվականին Բրազիլիայում տեղի ունեցած դպրոցական մարզիկների համաշխարհային 13-րդ Գիմնազիադիայում Հայաստանի դպրոցականները նվաճել են 4 մեդալ՝ 1 ոսկե (շախմատ) և 3 բրոնզե (1՝ լող և 2՝ ձյուդո): Գիմնազիադայի ընթացքում ակտիվություն ցուցաբերելու համար 39 պատվիրակություններից 5-ն արժանացել են հատուկ մրցանակի, այդ թվում՝ Հայաստանի հավաքականը:

ՀՀ ԿԳՆ Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոնի ներկայացուցիչը, մասնակցելով Ֆրանսիայի Սեստաս քաղաքում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությանը, շահել է արծաթե մեդալ:

«Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներից կազմված Հայաստանի ընտրանին, մասնակցելով ԱՊՀ երկրների սեղանի թենիսի դպրոցականների առաջնությանը, և՛ թիմային, և՛ անհատական մրցաշարերում գրավել է պատվավոր 3-րդ տեղը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության 2013թ. մանկապատանեկան մարզադպրոցների միջև տեղի են ունեցել 1996-97 թթ. ծնված պատանիների և աղջիկների հանրապետական առաջնություններ՝ հանդբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս մարզաձևերում: Առաջնություններին մասնակցել են թվով 1115 պատանիներ և աղջիկներ:

Կազմակերպվել են սենյակային թռչող «Գերթեթև» և «Ազատ թռչող» մոդելների գծով հանրապետական մրցումներ, որոնց մասնակցել են 74 դպրոցականներ, ինչպես նաև շուրջ 230 շահառուներ, ծնողներ, հրավիրվածներ, դպրոցականներ:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ ՀՀ անկախության 22-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 22-րդ մարզական խաղերի մրցումների ծրագրում ընդգրկվել են 6 մարզաձևեր՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, ս/թենիս և աթլետիկա, որոնց մասնակից են դարձել շուրջ 72.804 դպրոցականներ:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ ՀՀ «Ազգային Ժողովի» գավաթի խաղարկության 2013թ. մրցումներն անց են կացվել չորս փուլերով, որոնց մասնակցել են 1-6-րդ դասարանների 186.400 աշակերտներ:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ Ստեփանավանի Գարգառ գյուղի տարածքում կազմակերպվել և անց են կացվել տուրիստական հանրապետական խաղեր-մրցումներ, որոնց մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Լոռու և Շիրակի մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի թվով 200 դպրոցականներ:

2013 թվականին Չեխիայի Հանրապետության Լիդիցե քաղաքում կերպարվեստի 41-րդ միջազգային ցուցահանդեսին մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների

սաները ներկայացրել են շուրջ 20 աշխատանք, որոնցից մեկն արժանացել է գովասանագրի:

2013 թվականին Արզնի քաղաքի ուսումնական օդանավակայանում իրականացվել է «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ռոբոտաշինության խմբակի սաների կողմից պատրաստած էլեկտրոնային սարքերի ցուցադրումը:

Կազմակերպվել են ցուցահանդեսներ՝ գորգագործության և կարպետագործության, խեցեգործության, փայտարվեստի, արծաթագործության, ուլունքագործության, ասեղնագործության, գորելենագործության, նկարչության բնագավառներում: Գեղարվեստական միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի 21-ամյակին, Արցախյան շարժման 25-ամյակին, Սայաթ-Նովայի 300-ամյակին, Ա. Խաչատուրյանի 110-ամյակին, Համո Բեկնազարյանի 120-ամյակին, Զ.Վերդիի մահվան 200-ամյակին, Պ. Չայկովսկու մահվան 120-ամյակին, 1988թ. դեկտեմբերի 7-ի 25-րդ տարելիցին, «Վարդանանց» տոնին, «Սուրբ Սարգիս» հոգևոր տոնին և այլն:

2013 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք գեղարվեստական միջոցառումներ ՀՀ զորամասերում (Ճամբարակի, Սովետաշենի, Նուբարաշենի, Արարատի, Մարտունու, Սիսիանի և այլ զորամասեր), բարեգործական համերգներ ծերերի համար:

ՀՀ ԿԳՆ արտադպրոցական կենտրոնների սաները մասնակցել են հանրապետական և միջազգային տարբեր միջոցառումների և ճանաչվել լավագույնը: Կազմակերպվել է հանրապետության լավագույն փողային նվագախմբերի հանրապետական շքերթ-փառատոն՝ նվիրված «Հաղթանակի և խաղաղության տոնին (մայիսի 9):

## **ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

### **Օտարերկրյա ուսանողների ընդունելություն**

2013-2014 ուսումնական տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվել շուրջ 1200 օտարերկրյա քաղաքացիներ, որոնցից շուրջ 700-ը սփյուռքահայեր են, իսկ 500-ը՝ օտարերկրացիներ:

Ընդունելություն է իրականացվել նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: 2013-2014 ուսումնական տարում 75 սփյուռքահայեր ընդունվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

## **ՀՀ ԿԳՆ կողմից ուսման նպատակով գործուղված ՀՀ քաղաքացիներ**

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2013-2014 ուսումնական տարում օտարերկրյա պետություններ են գործուղվել շուրջ 160 ՀՀ քաղաքացիներ: Նրանք իրենց ուսումը շարունակում են Վրաստանում, Ռուսաստանում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Չինաստանում, Հորդանանում, Սլովակիայում, Իրանում և այլ երկրներում:

### **Ստորագրված փաստաթղթեր**

- ՀՀ կրթության և գիտության նախարարության և հայաստանում Ֆրանսիայի Դեսպանության միջև՝ «Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցում» ֆրանսերենի խորացված ուսուցում և լրացուցիչ ֆրանկոֆոն ծրագիր իրականացնելու վերաբերյալ:
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև՝ կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր
- 2012թ. նոյեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիբանանի Հանրապետության Կառավարության միջև ստորագրված համաձայնագիր՝ «Բարձրագույն և հետբուհական կրթության որակավորումների փոխադարձաբար ճանաչման մասին»: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2013թ. մայիսի 21-ին:
- Մադրիդում ՀՀ ԱԳ նախարարի կողմից ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իսպանիայի Թագավորության Կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիրը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության և Միացյալ Նահանգների Խաղաղության կորպուսի միջև՝ Գործողությունների ծրագիրը:
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարության միջև՝ 2014-2015 թվականների համար միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում համագործակցության ընդլայնման և զարգացման հետագա միջոցների մասին հուշագիրը:

## **Պաշտոնական այցեր և միջազգային միջոցառումներ**

Մեծ Բրիտանիա, Լոնդոն - հունվար

Միացյալ Թագավորության համալսարանների և գիտության նախարար, պատգամավոր Դեյվիդ Վիլլեթսի և կրթության պետքարտուղար, պատգամավոր Մայքլ Գոուլի հրավերով ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը մասնակցեց Կրթության նախարարների համաշխարհային կրթական համաժողովին: Համաժողովի ընթացքում նախարար Արմեն Աշոտյանը հանդես եկավ «Շախմատը դպրոցում. հաջողության հայկական պատմություն» զեկույցով՝ ներկայացնելով Հայաստանի հանրակրթական դպրոցներում շախմատի դասավանդման ծրագրի ներդրման փորձը:

Բելգիա, Բրյուսել - մարտ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը աշխատանքային այցով մեկնել է Բրյուսել, որի ընթացքում հանդիպում է ունեցել Եվրահանձնաժողովի կրթության և մշակույթի հարցերի պատասխանատուների հետ: Քննարկվել են 2012-2015 թվականներին Հայաստանի Հանրապետության կողմից Բոլոնիայի գործընթացի քարտուղարության ստանձման և Հայաստանում 2015 թվականին Բոլոնիայի գործընթացում ներգրավված պետությունների նախարարական գագաթաժողովի անցկացմանն առնչվող մի շարք հարցեր:

Ուկրաինա, Կիև - ապրիլ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը այցելել է Ուկրաինա, որի ընթացքում հանդիպում է ունեցել Ուկրաինայի կրթության և գիտության նախարար Դմիտրի Տաբաչնիկի հետ: Քննարկման օրակարգում են եղել կրթական համագործակցության ընդլայնման, երկկողմանի հարաբերությունների խորացման և հատկապես միջբուհական համագործակցությանը վերաբերող հարցեր:

Ֆինլանդիա, Հելսինկի – ապրիլ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը մեկնել է Հելսինկի՝ մասնակցելու Եվրոպայի Խորհրդի կրթության նախարարների համաժողովի 24-րդ նստաշրջանին, որի ընթացքում կայացել են Եվրոպայի կրթական ռազմավարություններին, որակյալ կրթության ապահովմանը, ինչպես նաև կառավարմանը և որակյալ կրթության ժամանակակից մարտահրավերներին վերաբերող հարցերի քննարկումներ:

Արցախ , Ստեփանակերտ - հունիս

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը այցելել է Արցախի Հանրապետություն, հանդիպել նախագահ Բակո Սահակյանի հետ և քննարկել Արցախում գիտության և կրթության զարգացմանը և այս ոլորտում երկու հայկական հանրապետությունների փոխգործակցությանը վերաբերող հարցեր:

Հորդանան, Ամման - հունիս

ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվել է Հորդանանի Հաշիմյան Թագավորությունում, որի ընթացքում Արմեն Աշոտյանը և Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարար Ամին Մահմուդը ստորագրել են ՀՀ կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիր: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Հորդանանի Հաշիմյան Թագավորության վարչապետ Աբդուլլա Նասուրի, Սենատի նախագահ Տահեր ալ Մասրիի հետ: Պատվիրակությունը այցելել է Թագավորության Գիտա-հետազոտական ասոցիացիա Integrated Technology Group-Amman կրթական կառավարման և software ծրագրային ապահովման տարածաշրջանային առաջատար կազմակերպության գրասենյակ:

Չինաստան, Պեկին – հուլիս

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը Հայաստանի Հանրապետական կուսակցության պատվիրակության կազմում պաշտոնական այցով մեկնել է Չինաստան, հանդիպում է ունեցել ՉԺՀ կրթության և գիտության փոխնախարար Հաո Փինգի հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել է կրթության և գիտության ոլորտում երկկողմ համագործակցության խորացումը և ընդլայնումը, մասնագետների, ուսանողների, դասախոսների և գիտնականների միջև փորձի փոխանակումը: Փոխնախարարը հայտնել է նաև, որ առաջիկայում Չինաստանի համալսարաններից մեկում կբացվի հայոց լեզվի և հայկական մշակույթի կենտրոն: Արմեն Աշոտյանը նշել է, որ վերջին տարիներին Հայաստանում մեծ հետաքրքրություն է առաջացել չինարեն լեզվի նկատմամբ, ինչպես նաև աննախադեպ աճել է չինական առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել ցանկացողների թիվը, որի վառ ապացույցն են ՉԺՀ կառավարության կողմից Հայաստանին

տրամադրվող կրթաթոշակային ծրագրերի թեժ մրցույթները: Կարևորելով չինարենի հանդեպ աճող հետաքրքրությունը, նախարարը հայտնել է, որ առաջիկա տարիներին Հայաստանում կբացվի չինարենի խորացված ուսուցմամբ ավագ դպրոց: Կողմերը քննարկել են նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Այցի շրջանակում պատվիրակությունն այցելել է Պեկինի մանկավարժական համալսարան, Շանհայի Ֆու Դան համալսարան, որը Չինաստանի լավագույն համալսարաններից մեկն է:

Բելառուս, Մինսկ - սեպտեմբեր

« ԿԳՆ պատվիրակությունը աշխատանքային այցով գտնվել է Բելառուսի Հանրապետությունում, որի ընթացքում տեղի է ունեցել « ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի և Բելառուսի ԿԳ նախարար Սերգեյ Մասկելիչի հանդիպումը և քննարկվել են երկու երկրների բուհերի համագործակցության, հանրակրթական փոխանակման ծրագրերի և դրանց իրականացման, ինչպես նաև կրթության միջազգայնացման, համատեղ գիտական գործունեության հարցեր: Այցի ընթացքում Արմեն Աշոտյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Բելառուսի պետական համալսարան և դասախոսություն կարդացել բուհի իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողների համար:

Պատվիրակությունն այցելել է նաև Նեսվիժ քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն, ինչպես նաև ծանոթացել Նեսվիժի գիմնազիայի աշխատանքներին:

Երևան - սեպտեմբեր

Արևելյան գործընկերության ոչ պաշտոնական երկխոսության շրջանակում Երևանում տեղի է ունեցել կրթության նախարարների հանդիպում, որին մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի կրթության, մշակույթի, լեզվական բազմազանության և երիտասարդության հարցերով հանձնակատար Անդրուլա Վասիլիուի, ԵՄ Խորհրդում նախագահող Լիտվայի կրթության և գիտության նախարար Դաիմիուս Պավալկիսի, Վրաստանի կրթության և գիտության նախարար Թամար Սանիկիժեի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի փոխնախարարները: Միջոցառմանը մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման և եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ինչպես նաև Ադրբեջանի արտգործնախարարի տեղակալ Մահմուդ Մամմադ Գուլիևը և դեսպան, Եվրամիությունում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչ Ֆուադ Իսգանդարովը:

Երևան - Հոկտեմբեր

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության Հայաստանի նախագահության շրջանակում տեղի է ունեցել Եվրամիության Արևելյան գործընկերության և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության երկրների կրթության նախարարների տարածաշրջանային երկօրյա համաժողով՝ նվիրված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի զարգացման խնդիրներին: Համաժողովը կազմակերպել էին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, Եվրախորհուրդը և Ուսանողների եվրոպական միությունը: Համաժողովի աշխատանքների արդյունքում ընդունվել է հռչակագիր:

Ռուսաստան, Մոսկվա - նոյեմբեր

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի գլխավորած պատվիրակությունը աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա: Այցի ընթացքում տեղի են ունեցել են հանդիպումներ ՌԴ կրթության և գիտության նախարար Դ. Վ. Լիվանովի և «Ռոսստորուդնիչեստվո» դաշնային գործակալության ղեկավար Կ. Ի. Կոսաչովի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են կրթության և գիտության ոլորտում հայ-ռուսական համագործակցության ընդլայնման, նոր նախագծերի և ծրագրերի ներդրման հետ կապված հարցեր: Նախարարի գլխավորած պատվիրակությունն այցելել է նաև Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան:

Սլովակիա, Բրատիսլավա – դեկտեմբեր

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի գլխավորած պատվիրակությանն այցելել է Սլովակիայի Հանրապետություն: Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Նիտրայի գյուղատնտեսական համալսարանի ղեկավարության և ուսանողների, Սլովակիայի կրթության, գիտության և սպորտի նախարար Դուշան Չապլովիչի, Բրատիսլավայի Կոմենսկու անվան պետական համալսարանի ղեկավարության և ուսանողների և Բրատիսլավայի քաղաքապետի Միլան Ստաշնիկի հետ:

**Սփյուռքի կրթօջախների համար դասագրքերի և այլ ուսումնական նյութերի ստեղծում, տրամադրում**



ա. Ընթացիկ տարում 30 երկրներում գործող Սփյուռքի դպրոցներին տրամադրվել է շուրջ 62 000 օրինակ դասագիրք և այլ ուսումնական և օժանդակ նյութեր,

բ. [www.spyurq.dasagirq.am](http://www.spyurq.dasagirq.am) կայքում տեղադրվել են նոր մեթոդական նյութեր (սցենարներ, բաց դասեր):

գ. ՀՀ ԿԳՆ-ի կողմից երաշխավորվել են Սփյուռքում ստեղծված 2 ուսումնական ձեռնարկներ:

### **1. Ուսուցիչների վերապատրաստում**

Ընթացիկ տարում վերապատրաստվել են 26 ուսուցիչներ 14 երկրներից:

### **2. Մասնագիտական կադրերի պատրաստում**

Այս տարի գրանցվել է դիմորդների 660 դիմում 18 երկրներից: Սիրիահայ դիմորդների հոսքը շարունակվում է:

### **3. Համահայկական Հայագիտական 6-րդ օլիմպիադա**

Մասնակցությունը 146 մասնակից 8 երկրներից:

### **4. Համահայկական մանկապատանեկան միջոցառումներ.**

Կազմակերպվել և իրականացվել է «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» խորագրով նկարչական մրցույթ-փառատոն, որի շրջանակներում ներկայացվել են շուրջ 2000 նկարներ 18 երկրներից:

### **5. Զավախքի հայերենով ուսուցմամբ դպրոցներին գույքի և դասագրքերի տրամադրում.**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին Զավախքի դպրոցներին հատկացրել է դպրոցական գույք / շուրջ 600 սեղան և 900 աթոռ / և 14.700օր. ուսումնական գրականություն:

## **ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

1. Մշակվել և կազմվել են կրթության ոլորտի ՀՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2014 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի նախագծերը:

2. Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը»:

3. Իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Թայքս ծրագրերի համակարգման աշխատանքներ, որի արդյունքում կազմակերպվել են «Բոլոնիայի բարեփոխումների իրականացումը ԲՈՒՀ-երում» աշխատանքային հանդիպումներ Եվրոպական (Շվեդիա և Բելգիա) փորձագետների մասնակցությամբ: Մշակվել և հաստատվել է «Բարձրագույն մասնագիտական կրթության կարողությունների հզորացում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրվելու նպատակով» TWINNING ծրագրային առաջարկի նկարագիրը և գործողությունների պլանը:

4. Հավաքագրվել և մշակվել են հանրակրթության, մասնագիտական կրթության և կրթության ֆինանսավորման 2013 թվականի ցուցանիշները, որոնք ներկայացվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտ:

5. Իրականացվել են կրթության ոլորտում իրականացվող պետական ռազմավարական ծրագրերի մշակման և մոնիթորինգի աշխատանքներ, մասնավորապես՝

- 1) Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր,
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիր և գերակա խնդիրներ,
- 3) ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրերից բխող կրթության ոլորտի 2013թ. միջոցառումների ծրագիր,
- 4) Կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի 2013-2014 թվականների միջոցառումների համալիր ծրագիր
- 5) ՀՀ կառավարության 2014 թվականի գործունեության ծրագրի կազմում և կրթության ոլորտի գերակա խնդիրների սահմանում,
- 6) ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի կրթության ոլորտի 2012թ. միջոցառումների ծրագիր,
- 7) ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների ծրագիր,
- 8) Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2013թ. տարեկան ծրագրի կրթության ոլորտի միջոցառումներ,

- 9) ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության իրականացումն ապահովող կրթության ոլորտի 2013թ. միջոցառումներ,
- 10) Գենդերային քաղաքականության 2011-2015թթ. կրթության ոլորտի միջոցառումների ծրագիր:

## **ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

1. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող աշխատանքներ
1. Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում և համակարգում՝ թվով 45 հոգի.
  2. Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների ատեստավորման կազմակերպում և համակարգում՝ թվով 51 հոգի.
  3. Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների մրցույթներ՝ - 17 մրցույթ.
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգերը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 224-Ն որոշումից բխող աշխատանքներ՝
1. Նախարարության համակարգում ընդգրկված ՊՈԱԿ-ների (բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների (ռեկտորների և տնօրենների) թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպում և անցկացում՝ 2 ռեկտորի մրցույթ և 11 տնօրենի մրցույթ.
  2. Նախարարության համակարգում ընդգրկված ՊՈԱԿ-ների (բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների (տնօրենների) ատեստավորման կազմակերպում և համակարգում՝ թվով 2 հոգի:
  3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշումից բխող աշխատանքներ՝

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ քննությանը մասնակցելու համար դիմել են 324 հավակնորդ, որից 262-ին շնորհվել է հավաստագիր, իսկ 32-ը քննությունը չեն հաղթահարել.
2. 10.01.2013թ. առ այսօր ընտրվել և նշանակվել են 15 հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ և նրանց հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1412-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ մանկավարժական կադրեր գործուղելու կարգ»-ի համաձայն գործուղվել են 13 ուսուցիչ:

### **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

1. Դատական մարմիններում նախարարության շահերի ներկայացում և պետական շահերի պաշտպանություն.
  - 1) վարչական գործով՝ ըստ հայցի «Տիգրան Գասպարյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ կառավարության՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ՀՀ կառավարության կողմից Տիգրան Գասպարյանին տրված պարտադիր զինվորական զորակոչից մինչև 2012 թվականի հունիսի 22-ը տարկետման հետ կապված իրավահարաբերության առկայության ճանաչման պահանջի մասին» թիվ ՎԴ 8501/05/12: ՀՀ վարչական դատարանը 2013 թվականի նոյեմբերի 6-ի վճռով հայցը մերժել է, որի դեմ հայցվորի բերած վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:
  - 2) ըստ հայցի Դիանա Գրիգորյանի ընդդեմ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ «2013 էվականի մարտի 29-ի թիվ Գ 115/13 գրությամբ պահանջված տեղեկատվությունը չտրամադրելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և պահանջվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին» ՎԴ 3541/05/13 վարչական գործով 2013 թվականի դեկտեմբերի 2-ի վճռով վարչական դատարանը ամբողջությամբ մերժել է հայցը:

3) վարչական գործով ըստ հայցի Արտուշ Ղուկասյանի ընդդեմ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ «ՀՀ ԿԳ նախարարի 2013-05-24 թիվ 232-Ա հրամանն ամբողջությամբ անվավեր ճանաչելու մասին» ՎԴ/ 5294/05-13, 16.12.2013 դատարանը գործը դատաքննության էր նշանակել, սակայն 16.12.2013 հայցվորը դիմում էր ներկայացրել հայցից հրաժարվելու մասին:

4) ըստ վերաքննիչ բողոքի՝ Ավետիս Այվազյանի ընդդեմ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ «Պետական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և պետական մարմնի միջամտող վարչական ակտը վերացնելու, անվավեր ճանաչելու պահանջների մասին»։ ՎԴ 4972/05/12 վարչական գործով: ՀՀ վարչական դատարանի 22.04.2013 թ. վճռի դեմ ՀՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ՝ բողոքը մերժելու մասին:

2. Կրթության և գիտության ոլորտը կարգավորող՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լիցենզավորման մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթների, ենթաօրենսդրական ակտերի մշակում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրի միջոցառումների ցանկով նախատեսված իրավական ակտերի մշակում և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում: Տարբեր գերատեսչություններից ստացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների, ՀՀ ԿԳ նախարարի նորմատիվ հրամանների նախագծերի վերաբերյալ կարծիքների, մասնագիտական եզրակացության տրամադրում և այլն:

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ ՀՀ կառավարության անհատական որոշման նախագծերի մշակում և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացում /»Լույս» հիմնադրամի կրթաթոշակառուներին, Մասդար ինստիտուտում սովորողներին տարկետման տրամադրում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու

կարգը հաստատելու մասին» թիվ 1394-Ն որոշման հիման վրա Պարտավորությունների կատարումն ապահովող գրավի պայմանագրերի կնքում:

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողներին՝ /հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած, զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած կամ զոհված (մահացած) զինծառայողների երեխա/ արտոնություններից օգտվելու համար եզրակացության տրամադրում :

5. Պատասխանվել է քաղաքացիներից ստացված տարբեր բնույթի և բովանդակության դիմումների:

6. Իրավական օգնություն և համագործակցություն կրթության և գիտության ոլորտին վերաբերող միջազգային, միջպետական պայմանագրերի և փոխըմբռնման հուշագրերի մշակման և կնքման աշխատանքներին:

7. Նախարարության աշխատակազմում կնքվող պայմանագրերի նախագծերին փորձագիտական եզրակացության տրամադրում:

## **ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

2013 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության գործունեությունը շարունակվել է բաց և հրապարակային քաղաքականության սկզբունքով: ԿԳՆ պաշտոնական [www.edu.am](http://www.edu.am) կայքէջը գերատեսչական կայքերի մեջ հաճախելիության աստիճանով գտնվել է առաջատար դիրքերում:

-Գործում է Facebook սոցիալական ցանցի «ԿԳՆ ընդունարան» էջը, որտեղ առցանց պատասխան է տրվել օգտատերերի բարձրացրած բոլոր 15 հարցերին,

-Շարունակել է գործել պաշտոնական կայքի բլոգը՝ <http://armeniaedu.blogspot.com/>,

-Լուսաբանվել են ԿԳ նախարարի այցերը ՀՀ Սյունիքի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզեր /հեռուստատեսություն, կայքեր, ռադիո/,

-«Голос Армении» թերթում շարունակել է գործել «За партой» խորագիրը, որի շրջանակում 2013 թվականին հրապարակվել է 42 նյութ,

- Կրթական թեմաներով մամուլում հրապարակվել է 717 նյութ,

- Նախարարության պաշտոնական կայքում զետեղվել են նախարարության

գործունեությանն առնչվող և հասարակական հետաքրքրություն ներկայացնող շուրջ 160 հայտարարություն, 285 լրատվական նյութ:

- Կազմակերպվել է ԿԳ նախարարի և նախարարի տեղակալների, վարչության պետերի 15 մամուլի ասուլիս, որոնք լուսաբանվել են հանրապետական հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական մամուլում,
- Հանրային քննարկման է դրվել 13 իրավական ակտի նախագիծ:
- Կազմակերպվել է ավելի քան 82 հանրային միջոցառում, որոնք լուսաբանվել են հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական, էլեկտրոնային և տպագիր մամուլում,
- Նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ընդունվել է 160 ահազանգ, որից 80-ը՝ Երևանից, 80-ը՝ մարզերից: Բոլոր ահազանգերը համապատասխան ընթացք են ստացել ինչպես նախարարության հանրակրթության վարչության, այնպես էլ կրթության պետական տեսչության կողմից:
- Պատասխան է տրվել քաղաքացիների կողմից էլեկտրոնային փոստով ստացված ավելի քան 300 նամակի,
- ԿԳ նախարարի մոտ կազմակերպվել է քաղաքացիների 12 ընդունելություն, որոնց ընթացքում նախարարն ընդունել է 140 քաղաքացու:
- Նախարարության ինֆոկենտրոնը սպասարկել է նախարարություն այցելած 6089 քաղաքացու:

**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունը 2013թվականի ընթացքում զարգացման ծրագրերի ու մոնիտորինգի վարչության հետ համատեղ իրականացրել է ՀՀ 2014-2016 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Կազմել և մշակել է ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագիծը ու սահմանված ժամկետում ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն: Վարչությունը կատարել է ՀՀ 2013թվականի պետական բյուջեով հաստատված թվով 68 ծրագրերի ֆինանսավորում: Օրենքով սահմանված կարգով շուրջ 400 կազմակերպությունների հետ /այդ թվում ենթակա 258/ կնքվել են պայմանագրեր, պատշաճ ձևով ապահովելով նրանց ֆինանսավորումը:

Վարչությունը մշակել և ՀՀ կառավարություն հաստատմանն է ներկայացրել 15 կառավարության որոշման նախագիծ:

Տարվա ընթացքում իրականացվել են համակարգի ենթակա կազմակերպությունների ընթացիկ ֆինանսական գործունեության վերահսկողություն, վերլուծություն, հաշվետվությունների ընդունում:

## **ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քարտուղարության տնտեսավարման և սպասարկման բաժնում 2013թ.-ի հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 13-ը ընկած ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

ՀՀ կառավարության և շահագրգիռ նախարարությունների քննարկմանն է ներկայացվել տարածքները վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու, դրանց ժամկետներն երկարաձգելու, գույք նվիրաբերելու, ինչպես նաև կազմակերպությունները վերակազմակերպելու /միացում/ մասին թվով 13 ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որից ՀՀ կառավարության կողմից ընդունվել է թվով 9 որոշում, իսկ 7-ը գտնվում են քննարկման փուլում:

Կատարվել են ՀՀ առողջապահության և ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թվով 11 քուլեջի՝ /համապատասխանաբար՝ 9 և 2/ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանն անցնելու հանձման-ընդունման աշխատանքներ:

Ներկայումս իրականացվում է «Գյումրու N 33 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացնելու վերակազմակերպման աշխատանքները: Վերահսկողություն է իրականացվել նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի նպատակային օգտագործման, վարձակալությամբ տրվող տարածքների և սեփականության իրավունքով տրված գույքի դուրսգրման աշխատանքների նկատմամբ:

«Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈՒ/ բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում շարունակվել են թվով 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատության հիմնանորոգման աշխատանքները:



Ուսումնասիրվել են մի շարք հանրակրթական դպրոցների շենքային պայմանները և դրանց բարելավման նպատակով միջնորդություններ են ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ:

Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ և Համաշխարհային Բանկի չափորոշիչներից ելնելով, կրթության բարելավման նոր վարկային ծրագրի նախապատրաստական փուլում վերանորոգման նպատակով, ընտրվել են թվով 20 ավագ դպրոցներ, վերջիններիս համար կազմվել են տեխնիկական վիճակի զննման և հետագա վերանորոգման առաջարկությունների փաթեթներ:

«Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈԻ/ բարեփոխումներ» ծրագրի շարունակման նպատակով ընտրվել են թվով 7 արհեստագործական ուսումնարան, վերջիններիս համար կատարվել է նորոգման աշխատանքների արժեքի խոշորացված հաշվարկ և նորոգման աշխատանքներն ընդգրկվել են ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ծրագրում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում 2013թ հունվարի 9-ից մինչև դեկտեմբերի 13-ը ընկած ժամանակահատվածում մուտքագրվել է 22230 գրություն և 5545 դիմում, որոնցից 14896-ին տրվել է դրական պատասխան:

## **ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

2013 թ.-ի ընթացքում իրականացվել են նախադպրոցական, տարրական հանրակրթական, հիմնական հանրակրթական, միջնակարգ հանրակրթական, նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով լիցենզավորման գործընթաց: Ներկայացված հայտերի հիման վրա կատարվել է փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանի նախագծերի պատրաստում: Որի արդյունքում ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով նախադպրոցական կրթական ծրագրով լիցենզիա են ստացել 6, տարրական հանրակրթական ծրագրով 152, հիմնական հանրակրթական ծրագրով 83, միջնակարգ հանրակրթական ծրագրով 118 ուսումնական հաստատություններ:

Իրականացվել են՝

Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով լիցենզիայի /3/, մասնագիտությունների գործունեության թույլտվության /8/ հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանի նախագծերի պատրաստում;

Միջին մասնագիտական կրթական ծրագրերով լիցենզիայի /1/, մասնագիտությունների գործունեության թույլտվության հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում /9/.

Բակալավրի կրթական ծրագրերով լիցենզիայի /2/, մասնագիտությունների գործունեության թույլտվության հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում /9/.

Մագիստրոսի կրթական ծրագրերով լիցենզիայի /4/, մասնագիտությունների գործունեության թույլտվության հայտերի ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում /5/.

Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախկին լիցենզիաները բակալավրի և մագիստրոսի լիցենզիաների վերաձևակերպում և այդ հիմքով եզրակացությունների, հրամանների նախագծերի կազմում /75/.

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների միջնակարգ /լրիվ/ կրթական ծրագրով լիցենզիայի դադարեցման հրամանների կազմում /63/.

«Կրթության և գիտության նախարարի հրամանով տրված ընդունելության սահմանային տեղերի փոփոխություն /66/.

Պատասխանվել է թվով 145 գրությունների:

Գործակալության կողմից ուսումնական հաստատություններում 2013թ. իրականացված լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նպատակով ուսումնասիրությունների արդյունքներով դադարեցվել է 4 բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով գործունեության լիցենզիաների գործողություն և խախտումների հիմքերով նախագգուշացվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնող 9 ուսումնական հաստատություններ: Կասեցվել է 6 նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության լիցենզիաների գործողությունը:

Թարմացվել են բարձրագույն, միջին, նախնական մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատությունների տեղեկատվական բազաները:

Գործակալության կողմից կարծիքներ են տրվել 4 գերատեսչությունների օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ:

Իրականացվել է կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի թվով 11 նիստերի նախապատրաստական աշխատանքներ՝ հայտարարություններ մամուլում տպագրելու, նիստերի օրակարգի, քվեաթերթիկների, արձանագրությունների, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում:

Գերատեսչական նորմատիվ ակտերի պաշտոնական տեղեկագրերում սահմանված կարգով հրապարակելու համար ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել թվով 11 գրություն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական հաստատություններին լիցենզիա տալու վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգի 2013 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակի ոչ հարկային եկամուտների գծով բյուջետային մուտքերի վերաբերյալ տեղեկանքները:

2011 թ. դեկտեմբերի 8-ին ընդունվեցին «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-349-Ն), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (ՀՕ-348-Ն), «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» (ՀՕ-348-Ն) ՀՀ օրենքները, որոնք կրթական ծրագրերի իրականացման համար տրված լիցենզիաների համար սահմանում են նոր պայմաններ ու պահանջներ: Մասնավորապես «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն կրթական ծրագրերով լիցենզավորման ենթական գործունեության տեսակների իրականացման համար նշված է «Հ» տառը, որի համաձայն նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություններ և 2012թ. հոկտեմբերի 2-ին հաստատվել է «Լիցենզավորված անձանց կողմից կրթական ծրագրերով լիցենզավորող մարմին ներկայացվող լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվության ձևերը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի N 927-Ն հրամանը, որով հաստատվել են լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող հաշվետվությունների ձևերը, համաձայն որի

ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված հաշվետվությունները ուսումնասիրվում են և առաջարկություններ կներկայացվեն ուսումնասիրության ավարտից հետո:

2013 թվականի հունիսի 19-ին ընդունվել է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (ՀՕ-84-Ն) ՀՀ օրենքը, որը պայմանավորված էր կրթության ոլորտի ներկա բարեփոխումներով և ուղղված է Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացմանը:

Բժշկական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները իրենց կրթական գործունեությունը ծավալում են ոլորտը կարգավորող օրենքներով և իրավական ակտերով, իրականացնում են կրթական ծրագրեր՝ ապահովելով սովորողների ուսուցումն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան: Սակայն կրթական գործունեության թույլտվությունը /լիցենզիան /ստացել են այլ գերատեսչությունից /ՀՀ առողջապահության նախարարությունից/:

ՀՀ օրենսդրությունից բխող մի շարք իրավական ակտեր մշակվում են և սահմանված ժամկետներում կներկայացվեն ՀՀ կառավարություն՝ «ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, «ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, «ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ նոյեմբերի 11-ի N747-Ա հրամանով իրականացվում են ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նպատակով ուսումնասիրություններ:

## **ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ**

«Պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների /բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական, հանրակրթական/ ավարտական փաստաթղթերի հայտերի հավաքագրում, հիմքերի ստուգում, ձևաթերթիկների և

գերազանցության մեդալների տրամադրում» գործառույթի շրջանակներում իրականացվել է ՀՀ ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի հայտերի հավաքագրում և բաշխում:

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվել է շուրջ 40000 հիմնական կրթության վկայական, 29500 միջնակարգ կրթության ատեստատ և 46 ոսկե մեդալ՝ գերազանց առաջադիմության համար:

2. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուս. հաստատություններին հատկացվել է 2900 նախնական մասնագիտական կրթության դիպլոմ:

3. Միջին մասնագիտական կրթության ուս. հաստատություններին հատկացվել է 8500 դիպլոմ:

4. Բարձրագույն ուսումնական հաստատություններին հատկացվել է 35200 դիպլոմ:

«Բարձրագույն, միջին և նախնական /արհեստագործական/ մասնագիտական, հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների կորցրած և խոտանված ավարտական փաստաթղթերի արխիվային հիմքերի ստուգում, կրկնօրինակների տրամադրում: Ավարտական փաստաթղթերի իսկության հաստատում» գործառույթի շրջանակներում ստուգվել է 1000-ից ավել ավարտական փաստաթղթերի գործերի հիմքեր, որոնցից մի մասին տրամադրվել է կրկնօրինակներ: Տրամադրվել է ավարտական փաստաթղթերի իսկության վերաբերյալ տեղեկանքներ և գրություններ:

«ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, Վարչապետի աշխատակազմեր ներկայացվող պետական պարգևներ, կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերի փաթեթի պատրաստում: ԿԳ Նախարարության պարգևների /հուշամեդալ, պատվոգիր, շնորհակալագիր/ հրամանների պատրաստում և տրամադրում» գործառույթի շրջանակներում ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել պետական պարգևներ, կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերի շուրջ 60 անձնական գործի փաթեթ: Պատրաստվել է 90-ից ավել հրամանի նախագիծ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով, պատվոգրով և շնորհակալագրով պարգևատրելու մասին:

«Հանրակրթական և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների դասամատյանների, գովասանագրերի և լիցենզիաների բաշխում: Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրերի տրամադրում» գործառույթի շրջանակներում ուսումնական հաստատություններին տրամադրվել է շուրջ

20300 դասամատյան, բաշխվել է 45000 գովասանագիր, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ղեկավարման իրավունքի հավաստագիր են ստացել 262 ուսուցիչ:

«Ուսումնական հաստատություններից ստացված ավարտական փաստաթղթերի ստացման և բաշխման հաշվետվությունների ստուգում և արխիվացում» գործառույթի շրջանակներում իրականացվում են հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններից ստացված ավարտական փաստաթղթերի բաշխման վերաբերյալ հաշվետվությունների ստուգման և արխիվացման աշխատանքներ:

Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգի էլեկտրոնային էջ՝ [students.armedu.am](http://students.armedu.am) հասցեով շրջանավարտների վերաբերյալ տվյալների տեղեկատվությունը շարունակական մուտքագրման ընթացքում է:

## **ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

2013 թվականին լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կողմից անցկացվել է «Բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացված լրացուցիչ կրթական ծրագրերի վերաբերյալ մշտադիտարկում, որի արդյունքում համալրվել է առկա տեղեկատվական բազան:

«Կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության լրացուցիչ և շարունակական կրթության 2014-2017 թվականների ռազմավարության և 2014-2017 թվականների ռազմավարության գործողությունների և միջոցառումների ծրագրի» նախագիծը:

Ավարտվել են լրացուցիչ և շարունակական կրթության արդյունքների ճանաչման կարգի նախագծի մշակման աշխատանքները: Եվրոպական կրթական հիմնադրամի աջակցությամբ ձևավորվել է աշխատանքային խումբ, հրավիրվել են միջազգային փորձագետներ: Արդյունքում մշակվել է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և վավերացման ուղեցույց, վերապատրաստվել են 8 գնահատողներ, իրականացվել են խոհարարների ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և վավերացման գործընթացի փորձնական աշխատանքներ, կազմակերպվել են լրացուցիչ կրթական ծրագրերի

կազմակերպման, իրականացման, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և վավերացման վերաբերյալ կլոր սեղան-քննարկումներ, ամփոփիչ համաժողով:

Լրացուցիչ, շարունակական կրթության արդյունքների ճանաչման կարգի հաստատումը, որը հանդիսանում է ոլորտի հիմնախնդիրներից մեկը, պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Կրթության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների նախագծի ընդունմամբ:

## **ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ**

2013 թվականի ընթացքում աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը հերթական և արտահերթ աուդիտներ է իրականացրել ՀՀ կրթության և գիտության նախարարության թվով 14 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, , «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկում (իրականացված գնումների գործընթացը), «Կրթություն» թերթի խմբագրություն» և «Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ-ներում:

Ներկայումս «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ում իրականացվում է արտահերթ նպատակային աուդիտ:

Աուդիտի ենթարկված բոլոր կազմակերպություններին տրվել են հանձնարարականներ հայտնաբերված թերությունները և խախտումները վերացնելու համար:

## **ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ /ԲՈՀ/**

Բուհերից և գիտական կազմակերպություններից ստացվել, մուտքագրվել և ուսումնասիրվել է (նաև տրվել փորձաքննության) գիտական աստիճանի որակավորման 611 գործեր: Հրամանագրվել, պատրաստվել և հանձնվել է գիտական աստիճանի 578 վկայագիր, որից՝ 43 դոկտորի և 535 թեկնածուի: Բեկանվել է 6 գիտական աստիճանի որակավորման գործ, կրկնական քննարկման է ուղարկվել 51 որակավորման գործ:

Բուհերից և գիտական կազմակերպություններից ստացվել, մուտքագրվել և ուսումնասիրվել է գիտական կոչման 217 որակավորման գործ: Սահմանված

ժամկետում կազմվել են եզրակացություններ, հրամանագրվել, պատրաստվել և հանձնվել է գիտական կոչման 254 դիպլոմ, որից՝ 75 պրոֆեսորի և 179 դոցենտի:

Մուտքագրվել և ուսումնասիրվել է (նաև տրվել փորձաքննության) օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի համապատասխանեցման 22 որակավորման գործ: Հրամանագրվել, պատրաստվել և հանձնվել է 18 գիտության թեկնածուի գիտական աստիճանի համապատասխանեցման հավաստագիր:

Վերանայվել է գիտությունների թեկնածուներին ատենախոսության գիտական ղեկավարների թույլտվության ցուցակները, որի արդյունքում 215 միջնորդությունից 192 գիտությունների թեկնածուի տրվել են ղեկավարելու թույլտվություններ (այդ թվում՝ 32-ը մշտական):

Պարբերաբար կատարվել է ԲՈՀ-ի ինտերնետային կայքի ([www.boh.am](http://www.boh.am)) համապատասխան բաժինների համալրում՝ ժամանակին տեղադրվել են ԲՈՀ-ի որոշումները, բարձրագույն որակավորման մասին անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

Տարվում են նախապատրաստական աշխատանքներ ԲՈՀ-ի ամենամյա հերթական տեղեկագրի (հ. 17) տպագրման ուղղությամբ:

ՀՀ ԿԳՆ ներկայացվել է գիտական աստիճանների և գիտամանկավարժական կոչումների շնորհման ծրագրի 2013թ. բյուջետային ֆինանսավորման հայտը: Ըստ համապատասխան պայմանագրերի կատարվել է մասնագիտական խորհուրդների կայացած պաշտպանությունների ծախսերի ֆինանսավորում, ֆինանսավորվել են նաև փորձագետները և փորձագիտական խմբերը:

## **ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

Թեմատիկ ստուգում

ՀՀ մարզերում իրականացվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 108 պետական, 20 ոչ պետական ուսումնական հաստատությունների և 2 օտարերկրյա բուհերի մասնաճյուղերի ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական կարգերին համապատասխան՝ սովորողների շարժի թեմատիկ ստուգում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի և գերատեսչական իրավական ակտերով հաստատված դրույթների



խախտումներ են հայտնաբերվել 12 քոլեջներում և 3 արհեստագործական պետական ուսումնարաններում: Խախտումների վերաբերյալ կազմվել է 15 ակտ:

Ստուգմամբ պարզվել է՝

1) իրականացվել է կրթական գործունեություն առանց լիցենզիայի առկայության (Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղ, Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ),

2) խախտվել է լիցենզիայով սահմանված տեղերի թիվը («Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գյուղատնտեսական պետական քոլեջ, «Հայբուսակ» համալսարանի բազային քոլեջ, Երևանի պարարվեստի պետական քոլեջ, Երևանի պետական Ֆինանսատնտեսագիտական քոլեջ),

3) ընդունելության կարգի կետերի պահանջների կատարման խախտումներ («Հայբուսակ» համալսարանի բազային քոլեջ, Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ « Երևանի մշակույթի պետական քոլեջ, Երևանի «Գլաժոր» քոլեջ, Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան, Գավառի պետական երաժշտական քոլեջ, Երևանի պետական Ֆինանսատնտեսագիտական քոլեջ),

4) ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի պահանջների կատարման խախտումներ (Մեղրու պետական քոլեջ),

5) ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգի կետերի պահանջների կատարման խախտումներ (Երևանի մշակույթի պետական քոլեջ),

6) ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի պահանջների կատարման խախտումներ (Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարան):

Թեմատիկ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը հրապարակվել է <http://www.edu.am>, <http://www.kpt.am> կայքերում:

2. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների փաստաթղթային ուսումնասիրություն

ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում (կրթության պետական տեսչությունում), համաձայն ժամանակացույցների, ուսումնասիրվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների՝ ընդունելության, փոխադրման, տեղափոխման,

ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարժը, ավարտական պետական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը: ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործում են 1423 հանրակրթական ուսումնական հաստատություններ: Փաստաթղթային ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, կազմվել է ընդհանուր թվով 30 արձանագրություն:

Ուսումնասիրությամբ պարզվել է՝

- 1) աշակերտների հրամանագրման հրամանագրքում (գործածության մեջ է 1992 թվականից) չեն գրանցվել 2011-2012 ուսումնական տարում դպրոց ընդունված չորս սովորողների մասին հրամանները (ՀՀ Լոռու մարզի Ահնիճորի հիմնական դպրոց),
- 2) սովորողն ազատվել է դպրոցից ծնողի դիմումի ներկայացման օրվանից ավելի ուշ (ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց),
- 3) հանրակրթական ծրագրի նախորդ աստիճանը կամ տվյալ ուսումնական տարվա ծրագիրը չյուրացրած սովորողը անցնել է հանրակրթության հաջորդ աստիճան կամ դասարան (ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.26, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի ավագ դպրոցներում՝ 1-ական դեպք),
- 4) 120-200 ժամ բացակայած սովորողը սահմանված կարգի խախտումով փոխադրվել է 11-րդ դասարան (ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ.37 ավագ դպրոցում՝ 1 դեպք):
- 5) 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների կետերի պահանջների կատարման խախտումներ (ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ,Գյումրու հ.հ. 2, 12 ավագ դպրոցներ),
- 6) ՀՀ կրթության և գիտության նախարարի 03.05.2012թ. N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի» պահանջների կատարման խախտումներ (ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 18 միջնակարգ, Արթիկի հ. 7 ավագ , ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի միջնակարգ ,ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի հ. 2 միջնակարգ, Երևանի հ. 33 հիմնական դպրոցներում՝ 1-ական դեպք),

7) ՀՀ կրթության գիտության նախարարի 15.05.2012թ. N 465 Ա/Ք հրամանով հաստատված «2011-2012 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների սուուզման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի և ժամանակացույցի» պահանջի խախտում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 18 միջնակարգ դպրոց):

8) ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի» պահանջների խախտումներ (ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի Առափիի, Քեթիի, Գյումրու «Իմպրոռիթմ արվեստի ակադեմիա», «Ֆոտոն» վարժարան , Գյումրու հ. հ. 18, 27 միջնակարգ, Գյումրու հ. հ. 2, 12, 37, Արթիկի հ. հ. 3, 7 ավագ, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի հ. 2 ավագ, ՀՀ Լոռու մարզի Կուրթանի, Ճոճկանի միջնակարգ դպրոցներ, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հենակետային վարժարան):

9) ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 22.06.2010թ. N 609-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգի» պահանջների խախտումներ (ՀՀ Շիրակի մարզի թվով 26 ուսումնական հաստատություններում, ՀՀ Արմավիրի մարզ՝ Արաքսի միջնակարգ, ՀՀ Կոտայքի մարզ՝ Մարմարիկի միջնակարգ, ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ Լուսակունքի միջնակարգ, Ճամբարակի հ. 2 հիմնական, ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյեի և Նեղոցի հիմնական, Սարչապետի, Դաշտադեմի, Դարպասի և Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցներ):

Խախտումներ և բացթողումներ կատարած տնօրեններին հանձնարարվել է վերացնել օրենսդրության պահանջների խախտումների հետևանքները և դրանց մասին սեղմ ժամկետում տեղեկացնել ՀՀ կրթության պետական տեսչությանը և լիազոր մարմնին:

Ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տվյալների և բազային տվյալների համադրումից պարզվել է, որ 68 ուսումնական հաստատությունների 47 սովորողներ միևնույն ժամանակահատվածում հրամանագրված են եղել 2 ուսումնական հաստատություններում: Կազմվել են 34 արձանագրություններ:

ՀՀ կրթության պետական տեսչության պետի գրությամբ ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին ոչ պետական ուսումնական հաստատությունների հիմնադիրներին ներկայացվել են համադրման արդյունքները:

3. Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնում, համայնքային ենթակայության թվով 24 մանկապարտեզ ՀՈԱԿ-ներից 22-ում ուսումնասիրություններ, «Անի պարտեզ» և «Ձյունիկ» հաստատությունում՝ տեսչավորում

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնում /այսուհետ՝ Բաժին/, համայնքային ենթակայության թվով 24 մանկապարտեզ ՀՈԱԿ-ներից /այսուհետ՝ հաստատություն/ 22-ում իրականացվել են ուսումնասիրություններ, «Անի պարտեզ» և «Ձյունիկ» հաստատությունում՝ տեսչավորում: Ուսումնասիրության ընթացքում կազմվել է թվով 22 արածանագրություն և 2 ակտ:

Ուսումնասիրությամբ պարզվել է՝

Ուսումնասիրության ընթացքում Բաժնի կողմից չեն ներկայացվել 2011 և 2012 թվականների աշխատանքային ծրագրերը: Ստուգայցերի վերաբերյալ ներկայացված համապատասխան գրությունների համաձայն՝ Բաժնի կողմից չի համակարգվել և չի ապահովվել ոլորտում իրականացվող աշխատանքների նկատմամբ պատշաճ վերահսկողություն: Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում Քաղաքապետարանի կողմից նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության կազմակերպում չի իրականացվել: Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում համայնքում նախադպրոցական տարիքի, ինչպես նաև նախադպրոցական տարիքի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում չի իրականացվել:

Թվով 22 հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների հետևյալ խախտումները և թերությունները.

1) 22 հաստատությունների կանոնադրություններում առկա են գործող իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող կետեր:

2) Գյումրու քաղաքային համայնքի կողմից անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցում իրականացվել է թվով 6

հաստատություններում, սակայն 22 հաստատություններին ամրացված անշարժ գույքի անհատույց օգտագործման իրավունքը պետական գրանցում չունի:

3)9 հաստատություններում առկա չեն ներքին կարգապահական կանոնները:

4)9 հաստատություններում խմբերը չեն ձևավորվել ըստ երեխաների տարիքային առանձնահատկությունների:

5) 12 հաստատություններում գործում են գերբեռնված խմբեր:

6)18 հաստատություններում դպրոցահասակ (6 տարին լրացած) երեխաները ընդգրկված են ավագ խմբերում:

7)17 հաստատություններում պահպանված չէ երեխաների շարժի մատյանի գործածության և վարման կարգը:

Հաստատությունների տնօրենների 65 տարին լրացել է, սակայն վերջիններիս հետ կնքված աշխատանքային պայմանագրերի գործողությունը Գյումրու քաղաքապետարանի կողմից չի վերանայվել:

2 հաստատությունների տնօրեններ չունեն բարձրագույն կրթություն:

10) 2 հաստատությունների տնօրեններ ունեն բարձրագույն կրթություն, սակայն չունեն համապատասխան աշխատանքային ստաժ:

11) 16 հաստատությունների 31 մանկավարժներ չունեն համապատասխան մասնագիտական որակավորում և աշխատանքային ստաժ:

12) 13 հաստատություններում կրթադաստիարակչական աշխատանքները չեն իրականացվում «Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագրի» և «Նախադպրոցական կրթության համալիր ծրագրի» պահանջներին համապատասխան:

13) 5 հաստատություններում տարատարիք խմբերում պարապմունքները չեն իրականացվում տարբերակված ուսուցման սկզբունքով:

Գյումրու քաղաքապետարանի «Անի պարտեզ» նախակրթարան և «Ձյունիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ների տեսչավորման արդյունքների մասին.

1) «Անի պարտեզ» նախակրթարանում և «Ձյունիկ» մանկապարտեզում հաստատություններին հանձնված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը չունի պետական գրանցում:

2) «Անի պարտեզ» նախակրթարան և «Ձյունիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ների կանոնադրությունների և նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի

կանոնադրության համապատասխան կետերի միջև առկա են մի շարք անհամապատասխանություններ:

3) Աշխատողների առողջության պահպանման, հանգստի, աշխատանքի կազմակերպման համար ստեղծված պայմանները բավարար են, միաժամանակ, մանկավարժական և սպասարկող անձնակազմը տարեկան 2 անգամ բժշկական ստուգման է ենթարկվել ոչ թե համայնքի բյուջեից, այլ աշխատակիցների միջոցների հաշվին:

4) Հաստատությունները չունեն կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիա:

5) Երկու հաստատություններում առկա են հիմնադրի կողմից հաստատված 2013 թվականի հաստիքացուցակը և տարիֆիկացիոն ցուցակը: Հաստիքացուցակներում պաշտոնների անվանումները և հաստիքային միավորների քանակը չեն համապատասխանում օրինակելի հաստիքացուցակին: Հաստատությունները չեն նախատեսել տնտեսվարի հաստիքային 1 միավոր, ինչը սահմանված է ՀՈԱԿ-ների կանոնադրության 51-րդ կետով:

6) «Ձյունիկ» մանկապարտեզի մանկավարժական համակազմի 6 աշխատակից /մեթոդիստը և դաստիարակներ/ չունի համապատասխան կրթություն, մասնագիտական որակավորում, աշխատանքային ստաժ:

7) Նշված երկու հաստատությունների թվով 6 դաստիարակներ, այդ թվում՝ երաժշտական դաստիարակները, վերջին 5 տարիների ընթացքում չեն մասնակցել վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների կատարելագործման դասընթացների:

8) Անի պարտեզ» նախակրթարանում գործող տարիքային 6 խմբերից 5-ը գերբեռնված են. երեխաների կոմպլեկտավորումը գերազանցում է սահմանված նորմերը:

9) «Ձյունիկ» մանկապարտեզի ավագ խումբ է հաճախում 6 տարին լրացած 4 երեխա:

10) «Անի պարտեզ» նախակրթարանում (3-4 տարեկանների) և «Ձյունիկ» մանկապարտեզում (3-4 և 5-6 տարեկանների) չեն ապահովվել պարապմունքների բաշխման ժամանակացույցների պահանջները:

11) «Անի պարտեզ» նախակրթարանում անբավարար են իրականացվում աշխատանքները տարատարիք խմբում:

Հայտնաբերված խախտումների հետևանքների և թերությունների վերացման նպատակով հաստատությունների տնօրեններին տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ: Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ գրություններ են

նույնպես տարածքային կառավարման նախարարին, Շիրակի մարզպետին, Գյումրու քաղաքապետին: Ամփոփ տեղեկանքը հրապարակվել է <http://www.edu.am> , <http://www.kpt.am> կայքերում:

4. Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատություններում ուսումնասիրություն

Կրթության պետական տեսչության կողմից ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատություններում իրականացվել է ուսումնասիրություն:

Ուսումնասիրված 44 ոչ պետական ուսումնական հաստատություններից ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 30 հաստատություններում, որոնց վերաբերյալ կազմվել է համապատասխանաբար 30 արձանագրություն: Հայտնաբերված խախտումների վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է <http://www.edu.am>, <http://www.kpt.am> կայքում:

1) Ուսումնական հաստատությունը չունի կանոնադրություն(4 ուսումնական հաստատություններ):

2) Ուսումնական հաստատության կանոնադրությունը հակասում է «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներին(4 ուսումնական հաստատություններ):

3) Օրինակելի ուսումնական պլանների պահանջների խախտումներ (13 ուսումնական հաստատություններ):

4) Ուսումնական հաստատություն են ընդունվել մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը 6 տարն չլրացած երեխաներ (2 ուսումնական հաստատություններ):

5) Դպրոցը չունի ներքին կարգապահական կանոններ (1 ուսումնական հաստատություն):

6) Դպրոցում դասավանդում են մանկավարժական համապատասխան որակավորում չունեցող ուսուցիչներ, որոնք չունեն նաև վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ (13 ուսումնական հաստատությունների՝ 35 ուսուցիչներ):

7) Դպրոցում իրականացվող կրթական ծրագիրը չի համապատասխանում ո՛չ պետական հանրակրթական ծրագրին, ո՛չ էլ առկա է սահմանված կարգով հաստատված այլընտրանքային կրթական ծրագիր (1 ուսումնական հաստատություն):

8) Աշխատողների հրամանագրման հրամանագիրքը վարվում է ռուսերեն լեզվով (1 ուսումնական հաստատություն):

9) Դպրոցում առկա չէ ուսումնական ժամանակացույցը, դասացուցակը չի

համապատասխանում ուսպլանին (3 ուսումնական հաստատություններ):

10) Դպրոցում առկա չէ հիմնական ընդհանուր կրթություն իրականացնելու թույլտվությունը (լիցենզիան) (1 ուսումնական հաստատություն):

11) Դպրոցը չունի լաբորատորիաներ, և (կամ) ՆԶՊ կաբինետ, և (կամ) բուժկետ, և (կամ) արհեստանոց, և (կամ) մարզադահլիճ, և (կամ) հանդերձարաններ, և (կամ) հանդիսությունների դահլիճ, և (կամ) խաղահրապարակ(5 ուսումնական հաստատություններ):

12) Սովորողների փաստացի թիվը չի համապատասխանում (գերազանցում է) լիցենզիայում ամրագրված սովորողների համակազմի սահմանային տեղերի քանակին (5 ուսումնական հաստատություններ):

13) Ուսումնական հաստատության փաստացի գործունեության հասցեն չի համապատասխանում ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված լիցենզիայում նշված գործունեության հասցեին(1 ուսումնական հաստատություն):

14) Դպրոցը հիմնական կրթության պետական նմուշի վկայական է տվել միջնակարգ կրթության լիցենզիայի հիման վրա (1 ուսումնական հաստատություն):

15) Դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը չունի մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում (2 ուսումնական հաստատություններ):

16) Զինղեկը չունի սպայական կոչում (2 ուսումնական հաստատություններ):

17) Խախտվել են չափորոշչի նորմերն ու դրույթները (6 ուսումնական հաստատություններ):

18) Խախտվել են 2012-2013թ.թ. ուսպլանի պահանջները (19 ուսումնական հաստատություններ):

Հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների հիմնադիրները ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի համապատասխան գրություններով տեղեկացվել են ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ, 30 դպրոցների տնօրենների տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

5. Երևանի Ե. Չարենցի անվան հ. 67 և Ա. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական դպրոցնրում տեսչավորում



Երևանի Ե. Չարենցի անվան հ. 67 և Ա. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական դպրոցներում իրականացվել է տեսչավորում: Տեսչական ստուգումների ընթացքում հայտնաբերված խախտումների և թերությունների վերաբերյալ կազմվել են ակտեր, տնօրեններին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները: Ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու նպատակով դպրոցի տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Տեսչավորումների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները հրապարակվել են <http://www.edu.am> , <http://www.kpt.am> կայքերում:

6. ՀՀ Սյունիքի և Շիրակի մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում ուսումնասիրություններ

Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, թերություններ՝

1. Վարչությունը չունի կանոնադրություն (Շիրակի մարզ): Վարչության կանոնադրությունում ի թիվս վարչության լիազորությունների, նշված են նաև գործառույթներ, որոնք «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված չեն (Սյունիքի մարզ):

2. Մարզպետարանի ենթակայությամբ գործող 5 դպրոցների կանոնադրությունները հակասում են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությանը: (Շիրակի մարզ 3, Սյունիքի մարզ 2):

3. 2012-2013 ուսումնական տարվա ուսումնական պլանների և (կամ) առարկայական ծրագրերի կատարման խախտումներ են հայտնաբերվել Շիրակի մարզի՝ 40 և Սյունիքի մարզի՝ 33 դպրոցներում:

4. ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ աշխատանքի է ընդունվել 23 ուսուցիչ և 38 մանկավարժական աշխատող Շիրակի մարզում, 44 ուսուցիչ և 6 մանկավարժական աշխատող Սյունիքի մարզում:

5. Շիրակի մարզի 32, Սյունիքի մարզի 10 ուսումնական հաստատություններում ՆԶՊ առարկան դասավանդող ուսուցիչները չունեն սպայական կոչում:

6. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջների կատարումը խախտվել է Շիրակի մարզի 3 , Սյունիքի մարզի 1 դպրոցներում:

7. Շիրակի մարզում 2010 թվականին ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր գործուղված մանկավարժների գործուղման ժամկետների խախտման 3 դեպք է գրանցվել, 2011 թվականին մասնագետներ չեն գործուղվել, իսկ 2012 թվականին գրանցվել է խախտման 2 դեպք: 2005, 2006, 2007 և 2008 թվականներին հանրապետության պետական մանկավարժական բուհերի նպատակային տեղերում ընդունված 28 ուսանողից 10-ը, խախտելով եռակողմ պայմանագրի պահանջները, բուհն ավարտելուց հետո աշխատանքի չեն ներկայացել: Սյունիքի մարզում 2004, 2005, 2006, 2007 և 2008 թվականներին հանրապետության պետական մանկավարժական բուհերի նպատակային տեղերում ընդունված 16 ուսանողներ խախտելով եռակողմ պայմանագրի պահանջները, բուհն ավարտելուց հետո աշխատանքի չեն ներկայացել:

8. Շիրակի մարզում ՀՀ այլ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ դպրոցներից մարզի դպրոցների X-XII դասարաններ ընդունված 528 սովորողներից մարզպետարանում հաշվառվել են միայն 331-ը:

9. Շիրակի մարզի հատուկ դպրոցներում սովորող 8 երեխա չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագիր, 10 երեխա՝ համաձայն բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության, ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, սակայն տարածքային կառավարման պետական մարմնի կողմից վկայագրեր չեն հատկացվել, 5-ը չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (սոցիալապես անապահով ընտանիքից են), սակայն հաճախում են հատուկ դպրոց:

Սյունիքի մարզի Գորիսի հ. 1 հատուկ դպրոցի 101 սովորողներից ոչ մեկը չունի վկայագիր, Կապանի հ. 3 հատուկ կրթահամալիրի 137 սովորողներից 17-ը չունի վկայագիր:

10. Գյումրու «Արարատ կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է նաև տարրական կրթություն՝ չունենալով համապատասխան թույլտվություն (լիցենզիա):

Ուսումնասիրությունների արդյունքները և դրանց վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են նախարարին և ՀՀ Շիրակի և Սյունիքի մարզպետներին:

7. ՀՀ Վայոց Ձորի և Կոտայքի մարզերի թվով 61 հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ուսումնասիրություն

ՀՀ Վայոց Ձորի, Կոտայքի մարզերի թվով 61 (Վայոց Ձոր՝ 21, Կոտայք՝ 40) պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ դպրոց) իրականացվել է կրթական գործունեության ուսումնասիրություն:

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 35 արձանագրություն, 18-ը՝ Վայոց Ձորի, 17-ը՝ Կոտայքի մարզերում: Հայտնաբերված խախտումները և դրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

ՀՀ Վայոց Ձորի և Կոտայքի մարզերի ուսումնասիրություններից պարզվել է.

Պետական ուսումնական հաստատության խորհուրդը չի հաստատել ներքին կարգապահական կանոնները (Վայոց Ձորի՝ 2 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության խորհուրդը հավանություն չի տվել ուսումնական հաստատության զարգացման ծրագրին (Վայոց Ձորի՝ 2 , Կոտայքի՝ 1 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության խորհուրդը հավանություն չի տվել ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին (Վայոց Ձոր՝ 2 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության խորհուրդը չի քննարկել ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները (Վայոց Ձորի՝ 2 Կոտայքի՝ 1 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության խորհուրդը չի վերահսկել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը (Վայոց Ձորի՝ 4, Կոտայքի՝ 2 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության խորհուրդը չի հաստատել իր աշխատակարգը (Վայոց Ձորի՝ 4, Կոտայքի՝ 2 դպրոցներ):

Դպրոցն ավարտած սովորողների ծնողները դեռևս խորհրդի անդամ են (Կոտայքի՝ 1 դպրոց):

Պետական ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանը չի ներկայացրել ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը (Կոտայքի՝ 1 դպրոց):

8-րդ դասարանի մեկ սովորող 2012-2013 ուսումնական տարվում ունեցել է 133 ժամ բացակայություն, սակայն առանց քննությունների փոխադրվել է հաջորդ դասարան (Կոտայքի՝ 1 դպրոց):

Ուսումնական հաստատության առաջին դասարան է ընդունվել մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը 6 տարին չլրացած երեխա(Վայոց Ձորի՝ 1 դպրոց):

Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր աշխատատեղը համալրվել է առանց մրցույթի (Վայոց Ձորի՝ 7 , Կոտայքի՝ 4 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածությունը չի համապատասխանում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջին (Վայոց Ձորի՝ 5 դպրոցներ):

Պետական ուսումնական հաստատության ուսուցիչը չունի համապատասխան մանկավարժական որակավորում կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ (Վայոց Ձորի՝ 8, Կոտայքի՝ 4 դպրոցներ):

Չեն ապահովվել ՀՀ կառավարության՝ 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերի» պահանջները (Վայոց Ձորի՝ 6, Կոտայքի՝ 5 դպրոցներ):

ՀՀ կառավարության՝ 2002թ. հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության պահանջների կատարման խախտումներ (Վայոց Ձորի՝ 8, Կոտայքի՝ 7 դպրոցներ):

Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջների խախտումներ (Վայոց Ձոր՝ 3, Կոտայքի՝ 5 դպրոցներ):

«Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջների կատարման խախտումներ (Կոտայքի՝ 3 դպրոցներ):

«Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջների կատարման խախտումներ (Վայոց Ձորի՝ 12, Կոտայքի՝ 2 դպրոցներ):

«Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2011-2012 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանների» պահանջների կատարման խախտումներ (Վայոց Ձորի՝ 4 դպրոցներ):

Հայտնաբերված խախտումները և նրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից ուսումնական հաստատությունների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ վերլուծությունը հրապարակվել է <http://www.edu.am>, <http://www.kpt.am> կայքերում:

8. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնասիրություններ

Երևան քաղաքի և ՀՀ մարզերի թվով 20 ուսումնական հաստատություններում իրականացվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման, ավարտական պետական փաստաթղթերի ստացման, պահպանության և բաշխման գործընթացի ուսումնասիրություն:

Նշված ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգմանը մասնակցելու թույլատրություն են ստացել 1071 ուսանող (ներառյալ պարտադիր զինվորական ծառայությանից հետո ուսանողական իրավունքը վերականգնած 9 ուսանող), որոնցից պետական ամփոփիչ ստուգմանը մասնակցել և դրական գնահատականներ են ստացել 1048 ուսանող: Ուսանողներից 23-ը չեն մասնակցել պետական ամփոփիչ ստուգմանը:

Ուսումնասիրության արդյունքում համապատասխան իրավական ակտերով սահմանված նորմերի խախտումներ չեն արձանագրվել: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են նախարարին:

9. Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարաններում սովորողների ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացման և գրավոր աշխատանքների ստուգման ընթացքի վերահսկողություն

Ուսումնասիրության արդյունքում կազմվել է տեղեկանք Երևան քաղաքի թվով 39 հիմնական դպրոցների 9-րդ, առանձին գործող թվով 37 ավագ դպրոցների և թվով 2 ոչ պետական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում սովորողների ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացման և գրավոր աշխատանքների ստուգման ընթացքի վերահսկման գործընթացի վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում համապատասխան իրավական ակտերով սահմանված նորմերի խախտումներ չեն արձանագրվել: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են նախարարին:

10. Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունում դիտարկում

Տեսչության կողմից իրականացված դիտարկման արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է Երևանի քաղաքապետին: Քաղաքապետից ստացվել է պատասխան գրություն:

11. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանում և համայնքային ենթակայության թվով 20 նախադպրոցական ուսումնական հաստատություններում դիտարկում

Դիտարկման արդյունքների ամփոփ պատկերը ներկայացվել է Վանաձորի քաղաքապետին: Համայնքի ղեկավարի գրությամբ ներկայացված տեղեկատվությունը ամփոփվել է կրթության պետական տեսչության կիսամյակային հաշվետվությունում:

12. Կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, հիմնախնդիրների, կրթության ցուցանիշների մասին

ՀՀ Արմավիրի, Արագածոտնի, Արարատի մարզերում իրականացված կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմվել է հաշվետվություն կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշների մասին: Հաշվետվությունը հրապարակվել է

<http://www.edu.am>, <http://www.kpt.am> կայքերում:

Կազմվել է ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրության արդյունքների վերլուծություն: Վերլուծությունը հրապարակվել է <http://www.edu.am>, <http://www.kpt.am> կայքերում:

13. Ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում, գործունեության վերլուծություն

ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 21 հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում իրականացված կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքում կազմված վերլուծությունը հրապարակվել է <http://www.edu.am>, <http://www.kpt.am> կայքում:

14. Նոյեմբեր ամսին իրականացվել են ուսումնասիրություններ ՀՀ ավագ դպրոցներում, պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններում, տեսչավորումներ՝ թվով երկու նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Ուսումնասիրությունների և տեսչավորումների արդյունքները ամփոփման ընթացքում են:

15. Դեկտեմբեր ամսվա երկրորդ տասնօրյակից իրականացվում են ուսումնասիրություններ ՀՀ հատուկ դպրոցներում:

Ուսումնասիրությունների և տեսչավորումների ամփոփ պատկերը կներկայացվի արդյունքների ամփոփումից հետո:

15. Դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ստուգում կամ ուսումնասիրություն: 2013թ. ընթացքում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների համար թվով 9 ուսումնական հաստատությունների տնօրենների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

## **ՀՀ ԿԳՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

2013 թվականին հարուցվել է 22 վարչական վարույթ, պետական բյուջե մուտք է արվել 4 700 000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար) դրամ:

Տեսչությունը պատասխանել է 300-ից ավելի գրավոր դիմումների: Դիմումներ են ներկայացվել տարբեր նախարարություններից, դատական տարբեր մարմիններից, պետական այլ կառույցներից, տնտեսավարող սուբյեկտներից, այլևայլ

կազմակերպություններից, անհատ քաղաքացիներից: Տեսչությունը պատասխանել է լեզվական հարցումներ պարունակող հարյուրավոր հեռախոսազանգերի: Հարցումներ են ստացվել ՀՀ իշխանության բարձրագույն մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գիտության, կրթության, տնտեսության ամենաբազմազան ոլորտներից, անհատ քաղաքացիներից: Տեսչության աշխատակիցներն արձագանքել են լեզվական խնդիրներին վերաբերող հրապարակումներին, մասնակցել են հաղորդումների, հարցազրույցների, հանդես են եկել հոդվածներով, լուսաբանել տեսչության գործունեությունը:

Օրենսդրական անկատարության պատճառով տեսչությունը ստուգումներ չի իրականացրել: Լեզվի պետական տեսչությունը վերահսկողություն է իրականացնում հայերենի կիրառությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ. դրանց չկատարելու հետևանքով պատճառվող վնասի առարկան պետության ոչ գույքային իրավունքներն են: ՎԻՎ օրենսգրքի 189<sup>2</sup>-189<sup>6</sup>-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների դեպքում ոտնձգության առարկան նույն օրենսգրքով նախատեսված կառավարման սահմանված կարգն է: Մինչդեռ օրենքի՝ վկայակոչված հոդվածներում քաղաքացիների, իրավաբանական անձանց կամ պետության ոչ գույքային շահերին, ինչպես նաև ոչ գույքային իրավունքներին վնաս հասցնելու դեպքերը ներառված չեն, ուստի սույն դրույթները Լեզվի պետական տեսչության պարագայում կիրառելի լինելու և նրա համար պարտականություններ առաջացնելու համար անհրաժեշտ է օրենքով նախատեսել նաև ոչ գույքային իրավունքներին վնաս հասցնելու դեպքերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվել է Էկոնոմիկայի նախարարությանը՝

- կա՛մ իրավական կարգավորում տալ վերը նշված խնդիրներին. կատարելով լրացում՝ ավելացնելով ոչ գույքային շահերին վնաս հասցնելու դեպքերը,
- կա՛մ հաշվի առնելով Լեզվի պետական տեսչության գործունեության բնույթը և առանձնահատկությունները՝ օրենքում կատարել փոփոխություն՝ որպես բացառություն նշված ստուգումների ցանկում ներառելով նաև Հայաստանի Հանրապետության լեզվի պետական տեսչության կողմից իրականացվող ստուգումները:

Ներկայացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Մշակվել և շրջանառության մեջ են դրվել՝



- 1.«Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության, Հայաստանի Հանրապետության լեզվական վերահսկողության և Հայաստանի Հանրապետության լեզվի պետական տեսչության մասին» ,
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
3. «Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
4. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
5. «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:
6. Մշակվել է Լեզվի պետական տեսչության մեթոդանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, որով կանոնակարգվում են Լեզվի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կիրառման հետ կապված ընդհանուր հարցերը:
7. Մշակվել և հաստատման են ներկայացվել Լեզվի տեսչության վերահսկման ոլորտներին համապատասխան 12 ստուգաթերթ:
8. Առաջարկվել է «Լեզվի մասին» ՀՀ օրենքը լրացնել նոր՝ 6-րդ հոդվածով, որով Հայերենի բարձրագույն խորհրդին կտրվի բարձր կարգավիճակ:

### **ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

1. Իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ՝ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է «Գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ներդնել գիտական եւ գիտատեխնիկական ծրագրերի/ թեմաների ընտրության ու հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ, կնպաստի միջազգային մակարդակին համապատասխան նախագծերի ընտրությանն ու արդյունավետ իրականացմանը եւ գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ կառավարություն է ներկայացվել «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որով սահմանվելու են մի շարք հասկացություններ (հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ), ֆինանսավորման ձեւերը համապատասխանեցվելու են գիտության եւ տեխնիկայի զարգացման արդի չափանիշներին, ինչպես նաեւ՝ հստակեցվելու է լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը:

ՀՀ կառավարություն է ներկայացվել «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը», որով նախատեսվում է իրականացնել գիտության ոլորտի աշխատողների սոցիալ-տնտեսական եւ աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Մշակման փուլում է Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման հայեցակարգը:

Մշակվում են գիտական կազմակերպությունների բազային ֆինանսավորման սկզբունքները եւ չափանիշները:

## 2. Ընթացիկ գործունեություն՝

### 2.1. Հայտարարվել եւ կազմակերպվել է 11 մրցույթ.

-Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթներ: Ներկայացվել էր ընդհանուր առմամբ՝ 472 հայտ, 358՝ բնական գիտություններ եւ 114՝ հասարակական գիտություններ եւ հայագիտություն բնագավառներից: Ֆինանսավորման է երաշխավորվել 159 գիտական թեմա:

-Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ: Ներկայացվել է 280 հայտ, հաղթող է ճանաչվել 97-ը: Հաղթող ճանաչված գիտնականները մեկ տարի ստանալու են ամսական կտրվածքով 135000 դրամ՝ ներառյալ հարկերը:

-Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի եւ սարքավորումների ձեռքբերման մրցույթ. արդյունքում հաղթել է 5 կազմակերպություն, տրամադրվել է 305 մլն 570 հազ. դրամ:

-Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված

գիտական թեմաների հայտերի մրցույթ - ֆինանսավորվել է 17 թեմա (ստացվել էր 32 հայտ):

-«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2013» մրցույթին մասնակցելու համար ստացվել է 51 հայտ, հաղթող է ճանաչվել 31 -ը, որից 30-ը ֆինանսավորվելու է Գիտության պետական կոմիտեի միջոցով:

-ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթ՝ բնական գիտությունների բնագավառում. ֆինանսավորման է երաշխավորվել 6 թեմա (ստացվել էր 8 հայտ):

-ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2014» միջազգային մրցույթ. ընդունվել է 35 հայտ, արդյունքները կամփոփվեն մինչեւ տարեվերջ:

-«ՀՀ ԿԳՆ եւ Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (Ֆրանսիա) միջեւ գիտական համագործակցության մասին» պայմանագրի շրջանակներում գիտական ծրագրերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ԳՀԱԿ - 2013» մրցույթ. ընդունվել է 19 հայտ, արդյունքները կամփոփվեն մինչեւ տարեվերջ:

-ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌՀԳՀ - 2014» միջազգային մրցույթ. ընդունվել է 14 հայտ, արդյունքները կամփոփվեն 2014 թ. սկզբին:

-«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2013» մրցույթ (հայտերի ընդունման ժամկետ՝ 10.01.2014):

2.2. Կազմակերպվել է 2012 թ. վերջին հայտարարված մրցույթների հայտերի գիտական փորձաքննությունն ու ամփոփվել են արդյունքները.

-ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի գիտական հետազոտությունների աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ - 2013» մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 17 ծրագիր (ստացվել էր 127 հայտ):

-ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ Գերմանիայի կրթության եւ հետազոտությունների դաշնային նախարարության համատեղ ֆինանսավորմամբ անցկացված գիտական ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ԳԿՀԴՆ-2012» մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 10 ծրագիր (ստացվել էր 17 հայտ):

-«Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2012» մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 25 ծրագիր, որից գիտության պետական կոմիտեն ֆինանսավորել է 20-ը (ստացվել էր 51 հայտ):

2.3. Ընդունվել են նախորդ տարիներին հայտարարված մրցույթների հաշվետվությունները.

-Ամփոփվել են 2011-2013 գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների հաշվետվությունները: Ծրագրերի ֆինանսավորմանը հատկացվել էր 1.580.283.700 դրամ, որի շրջանակներում իրականացվել է 360-ից ավելի գիտական գործուղում, գումարի 20 % -ի չափով ձեռք են բերվել սարքեր եւ սարքավորումներ, այդ թվում՝ նաեւ համակարգչային տեխնիկա, պատրաստվել է 1470 հրապարակում, այդ թվում՝ ամսագրերում տպագրվել են 758 հոդվածներ, 642 գիտաժողովի նյութեր, տպագրման են ներկայացվել եւս 58 հոդվածներ:

-Ամփոփվել են գիտական եւ գիտատեխնիկական գործունեության հիմնարար եւ կարելուորագույն կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների ծրագրի շրջանակներում 2011 թ. ֆինանսավորման երաշխավորված նախագծերի հաշվետվությունները: Ծրագրի շրջանակներում 2011-12 թթ. կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների 17 նախագծերի իրականացման նպատակով կնքվել են համապատասխան պայմանագրեր՝ մոտ 344 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից մոտ 52 մլն դրամը ֆինանսավորվել է ոչ բյուջետային աղբյուրներից:

2.4. Մրցույթների կազմակերպման գործընթացում կատարվել են հետեւյալ փոփոխությունները.

-Ավելացել են գիտական թեմաների ֆինանսավորման մրցույթների ծավալները, այդ թվում՝ թեմաներում ներգրավված գիտաշխատողների միջին աշխատավարձը ավելացել է 65000-ից մինչեւ 100.000 դրամ:

-Գիտական թեմատիկ ծրագրերի ֆինանսավորման մրցույթների հայտերի ընտրության գործընթացում առաջին անգամ 2013 թ. ծրագրերում ներգրավվել են արտասահմանյան փորձագետ-խորհրդատուներ:

-Առաջին անգամ հայտերն ընդունվել են առցանց եղանակով՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին՝ վերացնելով ավելորդ թղթաբանությունը, գործընթացը դարձնելով ավելի դյուրին եւ հեշտ կիրառելի, մոտեցնելով այն միջազգայնորեն ընդունված եւ կիրառում ստացած չափանիշներին:

2.5 Իրականացվել են պետական բյուջեում ընդգրկված թվով 13 գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրեր՝ 1.536.726,3 դրամի չափով:

2.6 Կոմիտեի միջոցով ֆինանսավորվել են՝

- երիտասարդ գիտնականների 3 դպրոցներ (5 մլն դրամ),
- 30 գիտական միջոցառում,
- միջազգային գործուղման են մեկնել 20 գիտնականներ:

2.7 Աշխատանքներ են տարվել ՔԵՆԴԼ նախագծի առաջին փուլն ավարտելու ուղղությամբ. հաջողությամբ ավարտվել են ԱՐԵԱԼ արագացուցչի հիմնական համակարգերի փորձարկումները:

3. Միջազգային համագործակցության շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն ստորագրել է.

- համագործակցության ծրագիր Ուկրաինայի գիտության, ինովացիայի եւ ինֆորմատիզացիայի հարցերով պետական գործակալության հետ,
- պայմանագիր Սեւանա լճում Հայաստանի եւ Բելառուսի ազգային հարստություն հանդիսացող քաղցրահամ ջրամբարների էկոհամակարգերի ուսումնասիրման միջազգային գիտագործնական կենտրոն-բիոլոգիական կայան ստեղծելու մասին,
- գիտական ծրագրերի մրցույթի անցկացման կարգ Բելառուսի Հանրապետության գիտության եւ տեխնոլոգիաների պետական կոմիտեի հետ,
- համաձայնագիր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի եւ Ռեյլատիվիստական աստղաֆիզիկայի միջազգային կենտրոն հետ,
- պայմանագիր Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի հետ,
- համաձայնագիր «Նոր տեխնոլոգիաների մշակման եւ առետրայինացման կենտրոնի զարգացման հիմնադրամ» ոչ առետրային կազմակերպության հետ:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ

Նոր նախաձեռնություններ

ԿԱԻ մասնագետները մշակել և ԿԱԻ կայքում տեղակայել են Ֆիզիկա առարկայի 9-րդ դասարանի ծրագրով նախատեսված «Էլեկտրականություն» թեմայի փորձերը իրականացնելու համար վիրտուալ լաբորատորիաների համակարգչային ծրագիր: Այն հնարավորություն կընձեռի կատարել էլեկտրականության հետ կապված 27 փորձեր՝ հավաքել էլեկտրական շղթաներ, կատարել չափումներ, գրառել արդյունքները, կառուցել գրաֆիկներ: Նախատեսվում է Ֆիզիկայի 7-րդ և 8-րդ դասարանների համար վիրտուալ լաբորատորիաների մշակման աշխատանքներն ավարտել 2014թ. առաջին կիսամյակում: Ուսուցիչների հեռավար ուսուցման մոդելի մշակման համար ստեղծվել է ԿԱԻ մասնագետներից կազմված աշխատանքային խումբ, որի՝ տեխնիկական միջոցներից օգտվելու հմտությունները զարգացնելու նպատակով ԿՏԱԿ-ի մասնագետների հետ համատեղ կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ /Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը տրամադրել է ծրագրային անհրաժեշտ ռեսուրսներ և թույլտվություններ հեռավար ուսուցման սերվերին միանալու համար/: Այս ուղղությամբ, անգելերենի մասնագետները «Խաղաղության կորպուս»-ի ներկայացուցիչների հետ համատեղ նոյեմբեր ամսից սկսվել են անգլերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների առաջին փուլը:

ԿԱԻ-ի կողմից մշակվել և ԿԳ նախարարության կողմից նոյեմբեր ամսին հաստատվել է «Դասագրքերի փորձարկման ուղեցույցը»: Սկսվել են 2014թ. հրատարակվող 23 անուն դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների փորձարկման աշխատանքները:

Առաջին անգամ մշակվել և մայիս ամսին ԿԳ նախարարություն են ներկայացվել հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների և տնօրենների վերապատրաստումների արդյունավետության գնահատման չափանիշների նախագծերը:

Վերապատրաստումներ

Նպատակ ունենալով բարձրացնելու մանկավարժների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների, ինչպես նաև դպրոցավարության, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման կարողությունների մակարդակը, ԿԱԻ-ն իր մասնաճյուղերի հետ միասին 2013 թվականի հունվարից կազմակերպել և իրականացրել է՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն, անգլերեն, ռուսաց լեզու, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ֆիզկուլտուրա, ՆԶՊ, ինֆորմատիկա առարկաների և տարրական դասարանների /14առարկա/ հերթական ատեստավորման ենթակա 806 ուսուցիչների 80-ժամյա վերապատրաստման դասընթացներ

ՀՀ հանրակրթական դպրոցների հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա, պատմություն, հասարակագիտություն, աշխարհագրություն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսաց լեզու, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, կերպարվեստ, ՆԶՊ, ինֆորմատիկա առարկաների և տարրական դասարանների/19 առարկա/ հերթական ատեստավորման ենթակա 7215 ուսուցիչների /80-ժամյա/ վերապատրաստման դասընթացներ:

12 երկրներից ժամանած սփյուռքահայ 29 ուսուցիչների 120-ժամյա վերապատրաստման դասընթացներ:

Կրթության ոլորտի 32 քաղծառայողների 72-ժամյա վերապատրաստման դասընթացներ: Եզդիերեն լեզու և գրականություն դասավանդող ազգությամբ եզդի 20 ուսուցիչների 18-ժամյա վերապատրաստման դասընթաց:

Շախմատի ակադեմիայի կողմից կազմակերպված հանրակրթական դպրոցների 2-4-րդ դասարաններում «Շախմատ» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստումների ընթացքում ԿԱԻ մասնագետը հոգեբանամանկավարժական դասընթաց է անցկացրել 373 ուսուցիչների համար:

Մրցութային կարգով կազմակերպել և իրականացրել է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու 81 հավակնորդների համար (Երևանում և ՀՀ մարզերում) 90-ժամյա վերապատրաստման դասընթացներ:

Ներառական դպրոցի կարգավիճակ հայցող հանրակրթական ուսումնական հաստատությունների 408 ուսուցիչների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների 165 մանկավարժների վերապատրաստման դասընթացներ:

#### Փորձաքննություն

ԿԱԻ-ի կողմից փորձաքննության են ենթարկվել 184 անուն /47542 էջ/ հանրակրթական և բուհական չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնաօժանդակ գրականություն:

Բովանդակային մշակումներ

Հանրակրթական պետական չափորոշչով նախատեսված սովորողների կարողությունների և հմտությունների, ինչպես նաև մանկավարժական աշխատողների առարկայական-մեթոդական զարգացման ուղղությամբ կատարվել են 90 անուն բովանդակային և մեթոդական մշակումները (ձեռնարկներ, ուղեցույցներ, հոդվածներ և այլն), որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

Լրամշակվել և ԿԳ նախարարության քննարկմանն են ներկայացվել հանրակրթական ավագ դպրոցի բոլոր առարկաների չափորոշիչները և ծրագրերը:

Ներառական կրթության համար մշակվել են 11 անուն ուսուցչի ձեռնարկ, սովորողների համար 22 աշխատանքային տետրեր:

Մշակվել են հատուկ մանկավարժների վերապատրաստման դասընթացի՝ աուտիզմ ունեցող երեխաների ուսուցումը կազմակերպելու վերաբերյալ ուսումնամեթոդական նյութեր:

Նորմատիվ փաստաթղթերի մշակում

ԿԱԻ-ի 2013թ. աշխատանքային ծրագրով և ԿԳ նախարարի ընթացիկ հրամաններով և հանձնարարականներով առաջին եռամսյակում իրականացվել են աշխատանքներ կրթության ոլորտը կարգավորող նորմատիվ փաստաթղթերի (օրենքի նախագծեր, հենքային և օրինակելի ուսումնական պլաններ, առանձին բնագավառները կարգավորող կարգեր, չափորոշիչներ, ծրագրեր և այլն) մշակման ուղղությամբ:

Մշակվել են՝

Հանրակրթական հիմնական ընդհանուր և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների նախագծերը

Հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով երաշխավորված՝ «Հայկական հարցի պատմություն», «Գրաբար», «Հայ ժողովրդական բանահյուսություն», «Արվեստի պատմություն», «Տրամաբանություն», «Հնագիտություն», «Ազգագրություն», «Հասարակագիտություն», «Համաշխարհային պատմություն», «Բարոյագիտություն», «Հոգեբանություն», «Կիրառական տնտեսագիտություն», «Տրամաբանության հիմունքներ», «Կյանքի



հմտություններ», «Ֆերմերային գործ», «Բնապահպանություն», «Էկոլոգիա», «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» առարկաների ծրագրերը:

#### Խորհրդատվություններ

2013թ. ընթացքում ուսուցիչներին տրամադրվել է խորհրդատվություն կրթական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի գնահատման չափանիշների, դասագրքերի փորձաքննության, մշտադիտարկման, դասի պլանավորման (դասապլանների մշակում, դասի տարբեր փուլերում կիրառվող ժամանակակից մեթոդներ), ներառական կրթության գործընթացի կազմակերպման, սկսնակ ուսուցիչների առջև ծագած խնդիրների պարզաբանման, քննակարգի, թեստերի հետ տարվող աշխատանքների ծանոթացման, ուսումնաօժանդակ միջոցների օգտագործման (գրատետրեր, ուսումնական պաստառներ, ուսումնաօժանդակ գրականություն և այլն), ուսումնական տարբեր բնագավառների միասնացման (ինտեգրման), գնահատման համակարգի կիրառման արդյունավետության, դպրոցներում կազմակերպվող միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

2013-2014 ուստարին նախապատրաստված սկսելու, հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և տնօրեններին անհրաժեշտ մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով ԿԱԻ-ի 43 մասնագետներից կազմված աշխատանքային 3 խմբերը օգոստոսի 26-29 հանրապետության բոլոր մարզերում անցկացրել են խորհրդատվություններ (օգոստոսյան):

#### Գնահատում

- Մշակվել է ուսուցանող գնահատմանը վերաբերող ծրագիր և մոդուլ հանրակրթական դպրոցների փոխտնօրենների վերապատրաստման համար:
- 365 հանրակրթական դպրոցներում իրականացրած ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարվել են փոփոխություններ 2013-14 ուստարվա սովորողների գնահատման մեթոդական ցուցումներում. Ուսուցանող գնահատման գործող տեսակներին՝ բանավոր հարցում, հայտորոշիչ թեստ, տնային աշխատանք, ավելացել են ուսուցանող ստուգում և գործնական աշխատանք տեսակները:
- Մշակվել և ԿԳ նախարարություն է ներկայացվել հանրակրթական դպրոցի սովորողների ընթացիկ գնահատման երաշխավորությունների նախագիծ

## ՄԿՈՒԶԱԿ

- Մշակվել են նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության 17 մասնագիտությունների և որակավորումների համար պետական կրթական չափորոշիչներ, դրանց համապատասխան կազմվել են ըստ մասնագիտությունների ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը: Մասնագիտությունների և որակավորումների ցանկը համաձայնեցվել է սոցիալական գործընկերների հետ: Դա նշանակում է, որ ընտրված մասնագիտությունները արտացոլում են աշխատաշուկայի կարիքները:

- Վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել ըստ հետևյալ խմբերի.

- կրթության և գիտության նախարարության և ՄԿՈՒԶԱԿ-ի 30 աշխատակիցների համար,

- նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների 1089 դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների համար,

- ուսումնական հաստատությունների 60 տնօրենի և փոխտնօրենի համար,

- ուսումնական հաստատությունների կառավարման խորհրդի 60 անդամների համար,

- պետական կրթական չափորոշիչներ մշակող 25 փորձագետների համար,

Ընդհանուր առմամբ մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատողները վերջին 4 տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ արդեն վերապատրաստվել են, ինչը կարևոր նշանակություն ունի մարդկային ռեսուրսների զարգացման համար:

- 4 ուսումնական հաստատություններում կատարված ուսումնասիրությունների միջոցով գնահատվել է ՄԿՈՒ համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունքները:

- Մշակվել և տպագրվել են ՄԿՈՒ հաստատությունների համար նախատեսված 12 միավոր ուսումնական ձեռնարկներ և ուսումնամեթոդական նյութեր:

- 50 ուսումնական հաստատություններում իրականացված մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել է պետական կրթական չափորոշիչների ներդրման աշխատանքների վիճակը: Բոլոր ուսումնական հաստատություններում խնդրահարույց հարցերի շրջանակում անցկացվել են աշխատողների վերապատրաստումներ:

- Հրատարակվել են <Մասնագիտական կրթություն և ուսուցում> ամսագրի 2013թ. 4 համարները:
- ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների գործնական կարողությունները ցուցադրելու նպատակով անցկացվել է <Հայաստանի հմտություններ> ազգային մրցույթը:
- Պատրաստվել, հեռարձակվել կամ տպագրվել են տարբեր ուղղվածության տեղեկատվական նյութեր ՄԿՈՒ համակարգի գործունեության, ուսումնական հաստատությունների ձեռքբերումների, հնարավորությունների ու զարգացման հեռանկարների վերաբերյալ:
- Մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին օժանդակելու գործում կարևոր տեղ է հատկացվում նաև եվրոպական և առաջավոր ՄԿՈՒ համակարգ ունեցող այլ երկրների փորձի վերաբերյալ փաստաթղթերի թարգմանությանը և տպագրմանը: Թարգմանվել և հանրությանն է ներկայացվել 200 էջ նման փաստաթղթեր:
- Կենտրոնի ամենօրյա աշխատանքում առանձին տեղ է զբաղեցնում ուսումնական հաստատություններին տրամադրվող խորհրդատվությունները: Դրանք ներառում են հարցերի շատ լայն շրջանակ՝ սկսած ուսումնական պլանների ու ծրագրերի կազմումից մինչև ուսումնական գործընթացի կազմակերպման մանրամասները:  
Կենտրոնը կազմակերպում և իրականացնում է ուսումնամեթոդական նյութերի, տարբեր նշանակության վերապատրաստման ու կարճաժամկետ ծրագրերի փորձաքննություններ: Այս տարի փորձաքննության է ենթարկվել շուրջ 20 միավոր փաստաթուղթ: Ըստ անհրաժեշտության կենտրոնը մասնակցում է նաև դրանց լրամշակմանը:

**« ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ » ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ըստ ներքոհիշյալ բաղադրիչների 2013թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ենթաբաղադրիչ 1.1 Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

2013 թվականի առաջին կիսամյակում Կոտայքի մարզից՝ 13, Լոռու մարզից՝ 15, Տավուշի մարզից՝ 10 և Շիրակի մարզից 31 համայնքների հաստատություններում շարունակվել են 2012 թվականին ստեղծված նախակրթարանների աշխատանքները: Դրանք բնականոն գործում են և ընդգրկված երեխաների թիվը կազմում է շուրջ 1600:

2012 թվականին, «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի միջնաժամկետ գնահատման ժամանակ, 3 տարիների աշխատանքի փորձի հիման վրա առաջացել էր «Դրամաշնորհներ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման համար» Ղեկավար Ձեռնարկի վերանայման անհրաժեշտություն: Այն վերանայվել և Համաշխարհային բանկի /այսուհետ՝ ՀԲ/ համաձայնեցմանն է ներկայացվել 2013թվականի մարտի 26-ին: 2013 թվականի ապրիլի 7-ին ՀԲ-ից ստացվել է Ձեռնարկի նոր տարբերակի հաստատումը, որից հետո այն հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 29.05.2013 թվականի թիվ 710-Ա/Ք հրամանով:

2013 թվականին նոր նախակրթարաններ ստեղծելու նպատակով՝ 2013թվականի փետրվար-մարտ ամիսներին իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ. մարզերից ստացված համապատասխան տեղեկատվության հիման վրա ամփոփվել են ինչպես այն համայնքների թիվը, որտեղ չկան մանկապարտեզներ, այնպես էլ այն համայնքների թիվը, որոնք խիստ կարիք ունեն ընդլայնելու արդեն գործող նախադպրոցական ծառայությունները:

Մարզային կրթության վարչության աշխատակիցների օժանդակությամբ ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակիցներն հանդիպումներ են ունեցել մարզի համայնքների ղեկավարների, նախադպրոցական հաստատությունների, դպրոցների տնօրենների հետ: Նրանց ներկայացվել են ծրագրի նպատակները, խնդիրները, հայտերի լրացման ձևերը: ԿԾԿ ԾԻԳ-ի համապատասխան աշխատակիցների կողմից մշակվում են նաև վերոնշյալ մարզերից ստացված նախադպրոցական հաստատությունների և նախադպրոցական տարիքի երեխաների վերաբերյալ տվյալները:

2013 թվականի ապրիլ-հունիս ամիսներին Հայաստանի 10 մարզերից տարբեր ուսումնական ու նախադպրոցական հաստատությունների ներկայացրած հայտերը գնահատվել և ներկայացվել են նախադպրոցական միկրոծրագրերի կառավարման խորհրդի հաստատմանը: Արդյունքում հուլիսի 15-ից 30-ը կնքվել են պայմանագրեր՝ ՀՀ 10 մարզերի 73 համայնքների հետ:

Հաստատություններն արդեն իրականացրել են համապատասխան տարածքների բարեկարգման աշխատանքները, ձեռք են բերել գույք, սարքավորումներ, մանկական գրականություն, ուսումնամեթոդական նյութեր, կառուցողական, դիդակտիկ, զվարճալի խաղեր և այլն Այդ աշխատանքներում ընդգրկվել են նաև համյանքների անդամները և ծնողները:

Նոր ստեղծված նախակրթարաններում ստեղծվել են լավ վերանորոգված և կահավորված դասասենյակներ, խաղասենյակներ: Ներկայումս նախակրթարանները բնականոն գործում են: Դրանցում ընդգրկված են շուրջ 1600 երեխա:

Ենթաբաղադրիչ 1.2 Կրթության որակի հատագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով

Հրատարակվել և դպրոցներին են բաշխվել 3 հանրակրթական առարկաների գծով ատեստավերման ենթակա ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկներ:

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների 2011-2012թթ. իրականացված վերապատրաստման արդյունքների գնահատման, ինչպես նաև մասնագիտական զարգացման խնդիրների պարզաբանման նպատակով իրականացվել է հետազոտություն: Հետազոտության ավարտին կազմակերպությունը ներկայացրել է խորը վերլուծական հաշվետվություն՝ իրականացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ:

Հրատարակվել և դպրոցներին է բաշխվել դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկ, որը ներառում է նյութեր դպրոցի կառավարման, կրթական գործընթացի կազմակերպման, առաջնորդության, թիմային աշխատանքի, ինչպես նաև դպրոցի գործունեության հետ կապված ֆինանսատնտեսական և իրավական հարցերի վերաբերյալ:

Դպրոցի տնօրենների վերապատրաստման ձեռնարկի պահանջներին համապատասխան մշակվել է դպրոցի կառավարման և ղեկավարման ոլորտում տնօրենների և հավակներդների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման հարցաշար:

Դպրոցների գործունեությունը առավել արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև դպրոց-կենտրոնների զարգացում ապահովելու նպատակով 2011 թվականի հունվարի 27-ին ստեղծված «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միությանը շարունակվել է ցուցաբերվել համապատասխան աջակցություն: Արդյունքում, Դպրոց-

կենտրոնների միության կողմից 2013թ. իրականացվել են դպրոցական նորարարությունների խթանմանը, դասավանդման և ուսումնառության որակի բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես.

մշակվել է դպրոցի զարգացման ծրագրի մշակման փաթեթ,

«Ուսուցչի էթիկայի նորմեր» փաստաթղթի նախագիծը,

Հանրապետության 6 դպրոցներում իրականացվել են դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված ուսուցիչների մասնագիտական զարգացման, ուսումնադիտողական և S<S նյութերի ստեղծմանը, սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, միջհամայնքային մեթոդական միավորումների ստեղծմանը, ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավմանը:

Կազմակերպվել են Միության մեջ ընդգրկված և հրավիրված դպրոցների տարբեր մասնագիտական խմբերի բազմաթիվ սեմինարներ և հավաքներ:

Ստեղծվել է «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության կայք-էջը:

Կատարված աշխատանքի շնորհիվ 2013 թվականին Միության կազմն ընդլայնվել է՝ ՀՀ կառավարության որոշմամբ ևս 36 դպրոցների թույլատրվել է մտնել «Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության մեջ:

Առաջիկայում նախատեսվում է շարունակել աջակցությունը Դպրոց-կենտրոնների միությանը:

Ենթաբաղադրիչ 1.3 Ուսումնական գործնթացում S<S-երի ներդրում

Կատարվել է էլեկտրոնային կրթական նյութերի գծով կարիքների գնահատման և S<S ներդրման ծրագրի միջնաժամկետ ուսումնասիրություն: «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է դաշտային տվյալների հավաքագրում, մուտքագրում և վերլուծություն: Հավաքված տեղեկատվությունը «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը (ԿԾԿ ԾԻԳ) փոխանցել է ՀՀ ԿԳ նախարարություն: Նախարարության կողմից համապատասխան առաջարկություններ ստանալուց հետո կշարունակվեն էլեկտրոնային նյութերի ձեռքբերման հետ կապված աշխատանքները:

Դպրոցի վարչակառավարման համակարգչային ծրագրի տեղադրման համար ԿԾԿ ԾԻԳ-ի և «ԼԱՆՍ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք են բերվել

անհրաժեշտ համակարգչային սարքավորումներ, որոնք էլ փոխանցվել են «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրինմանը:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԿԾԿ ԾԻԳ-ի միջև կնքված համապատասխան պայմանագրի շրջանակներում բարեփոխվել է դպրոցի վարչակառավարման համար համակարգչային ծրագիրը, որն էլ փոխանցվել է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրինմանը:

ԿԾԿ ԾԻԳ-ի և «Յունիքոմփ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում դպրոցի վարչակառավարման համար համակարգչային ծրագրը տեղադրվել է ՀՀ 1386 ուսումնական հաստատություններում:

Դպրոցի վարչակառավարման համակարգչային ծրագրի օգտագործման նպատակով դպրոցների ներկայացուցիչների վերապատրաստում իրականացնելու համար «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագրի կնքման աշխատանքները գտնվում են բանակցային փուլում:

Ենթաբաղադրիչ 1.4. Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին

2011 թվականին վերակազմավորված 17 ավագ դպրոցների ռեսուրս կենտրոնները համակարգչային սարքավորումներով համալրելու նպատակով 2012 թվականի դեկտեմբերի 28-ին ԿԾԿ ԾԻԳ-ը պայմանագիր էր կնքել «Ֆայն» ՍՊԸ-ի հետ: 2013 թվականի առաջին եռամսյակին «Ֆայն» ընկերությունը 17 ավագ դպրոցների ռեսուրս կենտրոններին տրամադրել է համակարգչային սարքավորումներ: Այսպիսով, 2008-2011 թվականներին վերակազմավորված ավագ դպրոցների ռեսուրս կենտրոնների համակարգչային սարքավորումներով համալրման գործընթացը ավարտվել է:

Ռեսուրս կենտրոնների գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով, 2012 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ ԿԳ նախարարի թիվ 01/19/11105-12 նամակով ավագ դպրոցներին հանձնարարվել է վարել գրանցամատյան՝ ռեսուրս կենտրոններ սովորողների հաճախելիությունը և կենտրոններում իրականացվող ուսումնական միջոցառումների թվի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում ավագ դպրոցներից հավաքագրված տվյալները մշակվել և ամփոփվել են ու փետրվարի 28-ին ներկայացվել ՀԲ:

«Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ ավագ դպրոցներին տրամադրել շարժական

համակարգչային սարքավորումներ: Այդ նպատակով ՀՀ ԿԳ նախարարի 30.05.2013 թվականի թիվ 04/19/5970-13 գրությամբ ԿԾԿ ԾԻԳ տրամադրվել են ավագ դպրոցների համար նախատեսված համակարգչային սարքավորումների տեխնիկական հատկորոշիչները և ավագ դպրոցների ցանկը: ԿԾԿ ԾԻԳ-ն իրականացնում է գնման գործընթացը. մասնավորպես իրականացրել է շուկային հետազոտություն, մշակել է մրցութային փաստաթղթերը, որոնք արժանացել են ՀԲ-ն հավանությանը: 14.08.2013 «Առավոտ» և «Հայաստանի Հանրապետության» թերթերում տպագրվել է կազմակերպություններին մրցույթին մասնակցելու հայտարարություն: Վերջինս տեղադրվել է նաև ՀԲ-ի և ԿԾԿ ԾԻԳ-ի կայքերում: 8 կազմակերպություն ձեռք են բերել մրցութային փաստաթղթեր: Մրցույթին մասնակցել են 4 կազմակերպություն: 2013 թվականի հոկտեմբերի 3-ին կայացել է մրցույթի բացում, որի արդյունքում պարզ է դարձել ամենցածր գին ներկայացնող կազմակերպությունը:

2013 թվականի նոյեմբերի 29-ին պայմանագիր է կնքվել «Լանս» ՍՊԸ-ն հետ, որը մինչև 2014 թվականի փետրվարի 7-ը պետք է ավագ դպրոցներին տրամադրի շարժական համակարգչային սարքավորումներ:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» ենթաձրագրի շրջանակներում 2012 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Բաղադրիչ 2.1. Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում  
Բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման և ապահովման համակարգի ամրապնդման համար՝ փորձագիտական աջակցության տրամադրում Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին (ՄԿՈԱՊԱԿ)

ՄԿՈԱՊԱԿ-ին միջազգային տեխնիկական աջակցության տրամադրման պայմանագրի շրջանակներում Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (Accreditation Organization of the Netherlands and Flanders - NVAO) կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են պայմանագրով սահմանված աշխատանքները: Մասնավորապես, NVAO-ն աջակցել է ՄԿՈԱՊԱԿ-ին Երևանի պետական համալսարանի և Երևանի պետական բժշկական համալսարանի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման, ինչպես նաև յուրաքանչյուր բուհում մեկական մասնագիտության ծրագրային հավատարմագրման աշխատանքների իրականացման հարցում: Ըստ այդմ,



գործընթացն ամփոփվել է և ս.թ. դեկտեմբերին NVAO-ն ներկայացրել է Երևանի պետական համալսարանում և Երևանի պետական բժշկական համալսարանում իրականացված փորձնական հավատարմագրման հաշվետվությունները:

ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից բուհերի 400 ներկայացուցիչների վերապատրաստումը՝ որակի արտաքին և ներքին ապահովման մեխանիզմների շուրջ:

Բուհերի աշխատակիցների՝ որակի արտաքին և ներքին ապահովման մեխանիզմների ուղղությամբ վերապատրաստման նպատակով ՄԿՈԱՊԱԿ-ի հետ 2012թ. օգոստոսի 1-ին կնքված պայմանագրի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում ՄԿՈԱՊԱԿ-ը իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքները, որոնք են՝ վերապատրաստման նյութերի մշակումը, վերապատրաստողների վերապատրաստումը և բուհերի աշխատակիցների վերապատրաստումը:

ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից բուհերի ինստիտուցիանալ փորձնական հավատարմագրում 2012թ. նոյեմբերի 16-ին ԿԾԿ ԾԻԳ-ի և ՄԿՈԱՊԱԿ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն ամփոփվել են փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքները Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, Երևանի «Գլաժոր» և «Հյուսիսային» համալսարաններում: Ս.թ. մարտի 20-ին ԿԾԿ ԾԻԳ-ի և ՄԿՈԱՊԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր՝ Երևանի պետական համալսարանում, Երևանի պետական բժշկական համալսարանում, Երևանի պետական լեզվաբանական համալսարանի, Երևանի պետական կոնսերվատորիայի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների իրականացման, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում և Երևանի պետական բժշկական համալսարանում փորձնական ծրագրային հավատարմագրման աշխատանքների իրականացման նպատակով, որոնք ընթացել են հաշվետու ժամանակաշրջանում և ներկայումս ամփոփման փուլում են: Ս.թ. սեպտեմբերի 12-ին, կնքվել է պայմանագիր ՄԿՈԱՊԱԿ-ի հետ ևս 5 (2 պետական և 3 ոչ պետական) բուհերում փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնելու նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են այս պայմանագրով նախատեսված աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2014 թվականին:

Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման նպատակով՝ պետական և ոչ պետական բուհերին դրամաշնորհների տրամադրում

Առաջին և երկրորդ փուլով դրամաշնորհներ ստացած 18 պետական և 3 ոչ պետական բուհերը շարունակել են դրամաշնորհային պայմանագրերով նախատեսված աշխատանքները և ամեն փուլի ավարտից հետո ներկայացրել համապատասխան ֆինանսական և ծրագրային հաշվետվությունները: Ըստ նախատեսված բուհերը ներկայացրել են նաև միջնաժամկետ հաշվետվությունները: Հաշվետու ժամանակաշրջանում ՄԿՈԱՊԱԿ-ը իրականացրել է միջնաժամկետ մոնիտորինգ նշված բուհերում և ներկայացրել մոնիտորինգի եզրակացություններ համապատասխանաբար առաջին և երկրորդ փուլով դրամաշնորհներ ստացած բուհերի համար: Բուհերի կողմից դրամաշնորհային ծրագրերի կատարման միջնաժամկետ հաշվետվություններն ու մոնիտորինգի եզրակացությունները քննարկվել են «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի Կառավարման խորհրդի համապատասխան նիստերում: Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է երրորդ փուլով բուհերին դրամաշնորհների տրամադրման գործընթացը, որի արդյունքում կնքվել են ևս 5 դրամաշնորհային պայմանագրեր հետևյալ բուհերի հետ.

Պետական բուհեր.

Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

Ոչ պետական բուհեր.

«Եվրասիա» միջազգային համալսարան

«Երևանի Մովսես Խորենացու անվան» համալսարան

Երրորդ փուլով դրամաշնորհային ծրագրերի իրականացումը մեկնարկել է:

Բաղադրիչի 2.2. Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում

2012 թ. նոյեմբերի 6-ին ԿԾԿ ԾԻԳ-ի և «Սիներջի Ինթերնեյշնլ» կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում «Սիներջի Ինթերնեյշնլ» կազմակերպությունը իրականացրել է նախատեսված աշխատանքները: Մասնավորապես իրականացվել է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) մշակումը, փորձարկումը, տեղադրումը ՄԿԿՏՀ-ում ներառվելիք հաստատություններում և այդ հաստատությունների

աշխատակցիների վերապատրաստումը ՄԿԿՏՀ-ի կիրառման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում ՄԿԿՏՀ տեղադրման աշխատանքները ավարտվել են 182 միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: ԿԾԿ ԾԻԳ-ի և «Սիներջի ինթերնեյշնլ սիստեմս ընկերության» միջև կնքված պայմանագրի գործողության վերջնաժամկետը 2014 թվականի սեպտեմբերի 30-ն է: Այս ժամանակահատվածում իրականացվելու են ՄԿԿՏՀ-ի տեխնիկական սպասարկման աշխատանքները:

Բաղադրիչ 2.3. Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը

Աջակցություն նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) կողմից դրամաշնորհների տրամադրմանը բուհերին

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է ՆՄՀ իրականացման փորձնական փուլի շրջանակներում բուհերին դրամաշնորհների տրամադրման գործընթացը, որի արդյունքներով ս.թ. սեպտեմբերի 5-ին 10 բուհերի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր՝ նորարարական ծրագրերի իրականացման նպատակով: Ծրագրերի իրականացումը մեկնարկել է:

Բաղադրիչ 2.4. Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին

Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման նպատակով ՀՊՄՀ-ի և եվրոպական բուհի հետ համագործակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի և ՀՊՄՀ-ի համագործակցության շրջանակներում իրականացվել են պայմանագրերով նախատեսված աշխատանքները: Համագործակցության արդյունքները ամփոփվել են ս.թ. դեկտեմբերի 11-13-ը Երևանում կազմակերպված ամփոփիչ համաժողովի ընթացքում, որի ընթացքում ներկայացվել են համագործակցության հիմնական արդյունքները, հետագա համագործակցության հեռանկարները:

Լաբորատոր սարքավորումների գնում ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի համար

Հաշվետու ժամանակաշրջանում ընթացել են ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող պետական բուհերի համար լաբորատոր սարքավորումների գնման գործընթացի կազմակերպման աշխատանքները: Ըստ այդմ անհրաժեշտ լաբորատորիաների ցանկը պարզաբանվել է այդ բուհերի հետ, այնուհետև ամփոփվել այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից: Կազմվել են գնման ենթակա լաբորատոր սարքավորումների տեխնիկական բնութագրերը, որոնց հիման վրա մշակվել և ՀԲ հաստատմանն է ուղարկվել միջազգային մրցութային փաստաթղթերի փաթեթը:

### **ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

1. Իրականացվել են 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող Հայաստանի կրթական ցանցի սպասարկման, կառավարման և ցանցային սարքավորումների պահպանման աշխատանքները: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ (յուրաքանչյուր դպրոցին մեկական 3G մոդեմ) և անվճար բջջային կապի հեռախոսահամարներ:

2. Շահագործվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը. Հայաստանի Հանրապետության 8 մարզերի 16 համայնքներում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 4 համայնքներում կազմակերպվել են 12–օրյա դասընթացներ 391 աշակերտի և 261 ուսուցչի համար:

3. Շահագործվել է «Հայկական կրթական միջավայր» պորտալը ([www.armedu.am](http://www.armedu.am)), հարստացվել է բովանդակային պարունակությունը, գործարկվել են պորտալի ենթակայքերը, ինչպես նաև մշակվել և շահագործվել են կրթական այլ կայքեր.

- «Հայկական կրթական միջավայր» ֆորումը (<http://forum.armedu.am>), որն ունի ավելի քան 915 թեմա, 12370 գրառում, շուրջ 3560 գրանցված օգտվողներ, հանրային քննարկման են ներկայացվել կրթական փաստաթղթերի, ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի նախագծերը,

- «Հեռավար ուսուցում» համակարգը (<http://learning.armedu.am/>), որում տեղադրվել են ուսումնական նյութեր, մասնավորապես «Մասնագիտական զարգացման դասընթաց ավագ դպրոցների ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալների համար» դասընթացը և այլն:

- «Պաշարների շտեմարան» կայքը (<http://lib.armedu.am>), որում ըստ դասակարգված բաժինների տեղադրվել է ավելի քան 580 նոր էլեկտրոնային պաշար (պաշարների ընդհանուր քանակը՝ 1400), այդ թվում՝ 2013-2014 ուստարվա հանրակրթական դպրոցի 36 դասագրքերի, 2012-2013 ուստարվա հիմնական դպրոցի 22 և ավագ դպրոցի 61 դասագրքերի էլեկտրոնային տարբերակները, Հանրակրթական ուսումնական հաստատությունների 16 ուսումնական առարկաների, Միջին մասնագիտական և Նախնական (արհեստագործական) կրթության 20 մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ և ծրագրեր, «Կրթություն» շաբաթաթերթի 2013թ. հրապարակված բոլոր համարները և այլ ուսումնական պաշարներ,

- մշակվել և գործարկվել են Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի մասին տեղեկատվություն ապահովող <http://etwinningplus.armedu.am/> և «Հանրակրթությունը Հայաստանում. Վիճակագրական տեղեկատու» (<http://stat.armedu.am/>) ենթակայքերը,

- շահագործվել են «Բարձրագույն կրթությունը Հայաստանում» (<http://studyinarmenia.org/>) և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ([www.ktak.am](http://www.ktak.am)) կայքերը:

4. Իրականացվել է Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն, հրապարակում.

- Հանրակրթության վիճակագրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով լրամշակվել և ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատվել է «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևը, որի հիման վրա Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացվել են համապատասխան ծրագրային փոփոխություններ և արդիականացում, հրատարակվել է «Հանրակրթությունը Հայաստանում 2012-2013 ուսումնական տարում» վիճակագրական տեղեկագիրը և բաշխվել պետական մարմիններին և այլ շահագրգիռ կազմակերպություններին,

- հրատարակվել է 2013-2014 ուսումնական տարվա Ձև 1 «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին հանրակրթություն (տարեկան)» վարչական վիճակագրական հաշվետվային ձևը, թղթային և էլեկտրոնային տարբերակներով իրականացվել են դպրոցների վիճակագրական տվյալների

հավաքագրման և մուտքագրման աշխատանքները, ձևավորվել է 2013-2014 ուսումնական տարվա տվյալների շտեմարանը,

- պարբերաբար, ըստ անհրաժեշտության, կազմվել և ՀՀ ԿԳՆ, ՀՀ ՖՆ, Ազգային վիճակագրական ծառայություն, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ, ՅՈւՆԵՍԿՕ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ), ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (ՅՈւՆԵՍԿՕ), «Կապի տարածաշրջանային համագործակցություն» (PCC), Հայաստանում Ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) Սենգորի անվան ֆրանկոֆոնիայի ամբիոն, ԶԼՄ-ներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին են տրամադրվել հանրակրթության ոլորտը բնութագրող տեղեկատվություն՝ ամփոփ տեղեկանքներ, վիճակագրական տվյալներ, աղյուսակներ և այլն,

- լրամշակվել և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտ է ներկայացվել 2012թ. կրթության ոլորտի ֆինանսական ծախսերի վերաբերյալ հարցաշարը (UIC2013B),

5. Իրականացվել է Հայաստանի դպրոցներում ՏՀՏ-ի օգտագործման մակարդակի վերաբերյալ հետազոտություն և ՏՀՏ կարիքների էլեկտրոնային ուսումնասիրություն՝ դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների շրջանում, հետազոտության արդյունքները մուտքագրվել են տեղեկատվական հիմնապաշար:

6. Իրականացվել են աշխատանքներ Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների անհատական տվյալների հաշվառման շտեմարանի շահագործման ուղղությամբ. մասնավորապես, պատրաստվել են «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի բարելավման, արդիականացման և տեղային (լոկալ) տարբերակի մշակման» փուլային հաշվետվությունները, մշակվել են «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի» համակարգչային ծրագրի կիրառման ուղղությամբ դպրոցների ներկայացուցիչների վերապատրաստման ծրագրի տեխնիկական և ֆինանսական առաջարկները և ներկայացվել «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ:

7. Ստեղծվել են ՀՀ հանրակրթական դպրոցների և բուհերի վարկանիշավորման համակարգերը, հանրապետության բարձրագույն և հանրակրթական ուսումնական հաստատություններից հավաքագրվել և համակարգ է մուտքագրվել վարկանիշավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իրականացվել է ընտրանքային

հետազոտություն բուհերի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանակներում:

8. Կրթության ոլորտում SCS բնագավառի ծրագրերի համակարգման և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, քննարկումներ, իրականացվել համատեղ աշխատանքներ, մասնավորապես,

- կազմակերպվել են Cisco ցանցային տեղային ակադեմիայի դասընթացներ Երևան քաղաքում և Սյունիքի մարզում,
- տեղեկատվական աջակցություն և մասնակցություն «Կանայք և տեղեկատվական հասարակությունը» ՀԿ-ի կազմակերպած «Տեխնոլոգիաներին անհրաժեշտ են աղջիկներ» ֆորումին,
- աջակցություն «Վորլդ Վիժն» կազմակերպության «Երեխաների առցանց անվտանգության ապահովում» ծրագրի աշխատանքներին,
- աջակցություն ու մասնակցություն ՀՀ ԿԳՆ և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Գործընկերներ ուսման ոլորտում» (Partners in Learning, PiL) փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում անցկացված միջոցառումներին,
- մասնակցություն Բրիտանական խորհրդի կազմակերպած «Կրթություն. գործընթաց, թե վերջնականապես» երկօրյա համաժողովին, ներկայացվել է զեկուցում,
- մասնակցություն Ռուսաստանի Դաշնության Կրթության կառավարման ինստիտուտի կազմակերպած «Կրթության որակի գնահատում, ուսումնական հաստատությունների վարկանիշավորում» սեմինարին,
- մասնակցություն «Օհանյան» կրթահամալիրում կազմակերպած Գիտության ամենամյա փառատոնին,
- մասնակցություն «Միջազգային համատեղ ուսումնասիրություններ՝ SCS-ն կրթության ոլորտում» աշխատանքային խմբի Սեուլում կազմակերպված հանդիպում-քննարկումներին, ներկայացվել է «Հայաստանի հանրակրթության ոլորտում SCS կիրառման մասին» զեկուցումը,
- մասնակցություն Սինգապուրում կազմակերպված «Education-Excellence in Public Schools» դասընթացին,
- մասնակցություն Գերմանիայում ՀՀ բուհերի վարկանիշավորման ազգային համակարգի հետագա ինտեգրման հնարավորության հարցերի քննարկմանը:

Կազմակերպվել են գործուղումներ Արցախ. իրականացվել են դպրոցներում համակարգչային սարքավորումների և ներդպրոցական ցանցերի շահագործման տեխնիկական աջակցության, հանրակրթության վիճակագրության հավաքագրման և SCS ներդրման շուրջ խորհրդատվության տրամադրման աշխատանքներ:

9. Իրականացվել են աշխատանքներ Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի շրջանակներում.

- մշակվել և ներկայացվել է դրամաշնորհային ծրագրի նախագիծը, նախապատրաստվել և ստորագրվել է դրամաշնորհային պայմանագիրը,

- անցկացվել են մրցույթի առաջին և երկրորդ փուլերը, ընտրվել են մասնակից 41 դպրոցները, կազմակերպվել է այդ դպրոցների ավելի քան 201 ուսուցիչների գրանցումը Եվրոպայի դպրոցների համայնքում,

- անցկացվել են տեղեկատվական-ճանաչողական առցանց և հանդիպում-սեմինարներ ծրագրում ընդգրկված ուսուցիչների և տնօրենների համար, տրամադրվել է խորհրդատվություն, կազմակերպվել են ծրագրի պաշտոնական մեկնարկի և առաջին փուլի ամփոփման միջոցառումները,

- ապահովվել է մասնակցություն աջակցող գործընկեր կազմակերպությունների և ուսուցիչների համար սեմինար խորհրդակցությանը Կիևում և Կրակովում, աշխատանքային հանդիպմանը՝ Բրյուսելում, ներկայացվել են զեկուցումներ ծրագրի ընթացքի և հետագա անելիքների մասին,

- կազմակերպվել են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բաց ընթացակարգերը,

- իրականացվել են ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների կազմման նախապատրաստական աշխատանքները:

10. Կրթական հաստատություններում օգտագործվող «Մայքրոսոֆթ» ընկերության ծրագրային համակարգերի արտոնագրերի ժամկետները երկարաձգելու նպատակով կազմակերպվել և իրականացվել են այդ համակարգերի ձեռքբերման գործընթացները: Աշխատանքներն իրականացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Դպրոցական պայմանագրի» շրջանակում:



## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԱՓՇԱՏԿ ARMENIAN ENIC)

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը այս տարի ևս շարունակեց տրամադրել որակավորումների ճանաչման և խորհրդատվական ծառայություններ (շուրջ 500), որոնք ուղղված են ուսումնական հաստատություններին, պետական մարմիններին, անհատներին, գործատուներին և բոլոր այն շահառուներին, ովքեր ցանկանում են տեղեկանալ ազգային և այլ երկրների կրթական համակարգերի, նրանցում շնորհվող որակավորումների, երկրների որակավորումների ազգային համակարգերի, նախկին փորձառության ճանաչման և այլ տիպի տեղեկատվության վերաբերյալ: ԱՓՇԱՏԿ-ը շարունակեց անցած տարիներից դեռևս սկիզբ առած սերտ համագործակցությունը ՀՀ պետական մարմինների բուհերի, գործատուների, միջազգային կառույցների, ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցի անդամների և այլ շահառուների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում եզրափակվեց դեռևս 2012թ. ապրիլին սկիզբ դրված «Լավագույն փորձի փոխանակման շարունակական ծրագիրը» (ENIC Capacity Building Project) Անգլիայի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ակադեմիական փոխճանաչման կենտրոնների մասնակցությամբ: Ամփոփվեց ծրագրի շրջանակներում 2012-2013թթ. կատարված աշխատանքները, կողմերի ձեռքբերումները, և հետագա համագործակցության հնարավորությունները:

2013թ.-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ակտիվ մասնակցություն ցուցաբերել Բոլոնիայի համանախագահության շրջանակներում անցկացվող միջոցառումներին, Բոլոնիայի գործընթացի աշխատանքներին՝ ճանաչման, շարժունության և որակավորումների ազգային շրջանակների ուղղություններով, մասանվորապես կենտրոնի աշխատակիցները ընդգրկված են եղել:

Ազգային որակավորումների շրջանակի ինքնահավաստագրման աշխատանքային խմբում,

Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) “Շարժունություն և միջազգայնացում» աշխատանքային խմբում (Working Group on Mobility and Internationalisation):

Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) «Որակավորումների շրջանակի ազգային համակարգող մարմինների» աշխատանքային խմբում:

Կենտրոնը ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային հանդիպումների և կոնֆերանսների, այդ թվում 2013թ մայիսին Մադրիդում կայացած «Որակի ապահովման և համատեղ ծրագրերի ճանաչման վերաբերյալ համաժողովին (JOQAR Project), որը նպատակաուղղված էր իրազեկելու բուհերին, որակավորումների ճանաչման, որակի ապահովման և հավատարմագրման մարմիններին և այլ շահառուներին համատեղ աստիճանների ճանաչման և որակի ապահովման վերաբերյալ վերջին փոփոխությունները (նորությունները) մշակված Հավատարմագրման եվրոպական միավորման (ECA) կողմից:

2013թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ կենտրոնը տարբեր ակադեմիական փաստաթղթերի, կրթական համակարգերի, բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ոլորտին վերաբերող բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ անընդհատ պարզաբանում/խորհրդատվություն է տրամադրել նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ անձնական այցելություններով կազմակերպություն դիմած անհատներին:

## 2. Բոլոնիայի քարտուղարության 2013թ. հաշվետվություն

2012թ. ապրիլին Բուխարեստում կայացած նախարարական գագաթաժողովում Հայաստանը ընտրվեց որպես հաջորդ նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկիր: Համաձայն Բոլոնիայում ընդունված կանոնակարգի՝ երկիրը, որը հյուրընկալելու է հաջորդ նախարարական գագաթաժողովը, նաև ստանձնում է Բոլոնիայի գործընթացի համակարգման պարտականությունները:

Այսպիսով Հայաստանը պաշտոնապես ծավալեց Բոլոնիայի քարտուղարության գործունեությունը 2012թ. հուլիսի 1-ից: Քարտուղարության անձնակազմը բաղկացած է 9 մասնագետներից, որոնք ունեն բարձրագույն կրթության ոլորտի վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, տիրապետում են օտար լեզուներին, ժամանակակից տեխնոլոգիաներին և ունեն միջազգային կառույցների հետ համագործակցության փորձ:

Քարտուղարության գործառույթներն ու պարտականություններն ամրագրված են Բոլոնիայի քարտուղարության պաշտոնական փաստաթղթերում, որոնք հաստատվել են Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի կողմից (ԲԳՀԽ): Քարտուղարության հիմնական գործառույթներն են.

կազմակերպական և գործառնական աջակցություն Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբին և նրա խորհրդին, որն իր մեջ ներառում է պարբերական հանդիպումներ, փաստաթղթային փաթեթների կազմում, արձանագրությունների կազմում,

աջակցություն՝ աշխատանքային ծրագրով հաստատված բոլոր աշխատանքային խմբերին, համացանցերին և ենթախմբերին, ԵԲԿՏ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն առնչվող որոշակի առաջադրանքների իրագործմանը,

ԵԲԿՏ-ի մշտական կայքի և արխիվի պահպանում և թարմացում՝ նոր տվյալներով, որը հասանելի կլինի Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբին և այլ շահառուներին,

աջակցություն 2015 թ.-ին Երևանում կայանալիք նախարարական գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքներին,

Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ իրազեկում՝ աշխարհի այլ տարածաշրջաններում:

Բոլոնիայի քարտուղարության ստանձնումը կարևոր պատասխանատվություն է ՀՀ կրթության և գիտության նախարարության համար, որն անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկեց կարճ ժամանակում կազմակերպելու քարտուղարության աշխատանքները՝ ապահովելով Երևանյան գրասենյակը բնականոն գործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմաններով:

2013թ.-ին քարտուղարությունը շարունակաբար աջակցել է ԲԳՀԽ-ի աշխատանքային խմբերի (ԱԽ), ենթախմբերի և համացանցերի գործունեությանը, որն ուղղված է իրականացնելու ԲԳՀԽ-ի 2012-2015թթ. աշխատանքային ծրագիրը:

Քարտուղարության յուրաքանչյուր անդամ պատասխանատու է որոշակի աշխատանքային խմբի կամ ենթախմբի գործունեության համար, ամենօրյա կապի մեջ է գտնվում թե՛ համանախագահների, թե՛ խմբի անդամների հետ՝ ապահովելով անհրաժեշտ գործառույթները և ընթացիկ աշխատանքների արդյունավետ համակարգումը:

2013թ. տեղի ունեցան յուրաքանչյուր աշխատանքային խմբի առնվազն երկու հանդիպումներ: Այս հանդիպումներն արդյունավետ էին օրակարգային հարցերի քննարկման, հետագա քայլերի, վերջնարդյունքների առումով: Քարտուղարությունը ակտիվորեն մասնակցել է հանդիպումների ժամանակ արծարծված հարցերի քննարկումներին, արձանագրել հիմնական արդյունքները՝ ստանալով համանախագահների համաձայնությունը:

Հատկանշական է, որ Հայաստանը՝ որպես Բոլոնիայի գործընթացի փոխնախագահ երկիր (2012-2015թթ.), լայնորեն ընդգրկված է Բոլոնիայի գործընթացի բոլոր աշխատանքային խմբերի մեջ, ինչը հնարավորություն է ընձեռում մասնակցելու բոլոր հիմնարար հարցերի քննարկումներին՝ ներկայացնելով ազգային փորձը և լավագույնս կիրառելով միջազգային փորձառությունը: Աշխատանքային խմբերում ընդգրկված են ՀՀ կրթության և գիտության նախարարության, բուհերի և կրթական այլ կառույցների փորձագետներ:

Հայաստանի համար Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ձեռքբերումների բարձր գնահատականի վկայությունը՝ հաջորդ 2015թ. նախարարական գագաթաժողովի հյուրընկալումն է մեր երկրում: Որոշակի նախապատրաստական աշխատանքներ են կատարվել այս առումով: Գագաթաժողովի հյուրընկալումը շփման նոր հարթակ է բացում հայկական բուհերի համար՝ ակտիվ համագործակցության հնարավորություններ տալով միջազգային շրջանակներում, բարձրագույն կրթական բարեփոխումների համատեքստում կիրառելով լավագույն փորձառության մոդելները և մաս կազմելով Եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջանի: Բոլոնիայի գործընթացը հատկապես գնահատելի է նաև նրա համար, որ այն նոր տիպի համագործակցային հարաբերությունների հնարավորություն է տալիս կրթության բոլոր շահառուներին՝ ուսանողներին, բուհերին, գործատուներին:

Կարևոր է, որ Հայաստանում երեք տարով հանգրվանած Բոլոնիայի քարտուղարությունը իր ռեսուրսներով խթանի ազգային բարձրագույն կրթական հաստատությունների, ուսանողների և գործատուների համագործակցությունը՝ սեմինարների, հանդիպումների և տեղեկատվական այլ միջոցառումների համատեղ կազմակերպման միջոցով: